



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2660

3K26
y-89

Տ. ԿՐՈՒՊԱԿԱՅԱ

Հիշողություններ
Լենինի ՄԱՍԻՆ

Թարգմ. Ա. ԶԱՐՅԱՆԻ

ՀՀ
5

ՄՈՍԿՎԱ-1926

24.05.2013

07 JUN 2005
9

№ 16730. ԳՐԱԴԱՐԱՆ

21418

3K26 Հրանության
4-89 Հրանության
կերպ ճշույժ
1942 ամիս
vii ս 931 8/180
vi ս 11482 Տրամադրություն

Ն. ԿՐՈՒՊՈՎԱՅԱ

20 NOV 2009

3K26
4-89
Մ.

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Ա. ԶՈՐՅԱՆԻ



Հ. Օ. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Նո 320
ՄԱՍԻՆ. 1926

1893—1894

Պլաղիմիլ ու զետերը բուրգ յեկավ 1893
 թվի աշնանը, բայց ևս անմիջապես չծանոթա-
 ցա նրա հետ: Ընկերն եւ լսել եյի, վոր վոլ-
 գայից յեկել եւ շատ բան զիացող
 մարքսիստ, ապա բերիւ Շուկաների մասին»
 վերնագրով մի տետր, վոր բավական ձեռքից-
 անցել: Տետրում մի կողմից շարադրված
 եր Պետերբուրգի մարքսիստի՝ տեխնոլոգ
 ու կր սինի, մյուս կողմո՞ւ Վոլգայից յե-
 տայւած երբէ: Տետրը մօջտեղից ծալված
 լուսով ձեռագրով, չնշումներով ու
 հավելումներով իր մաքերն եր շարադրել Հ. Կրա-
 յնը, մյուս կողմը, խնամքով, առանց ջնջում-
 ների, իր ծաւ թյուններն ու առարկություն-
 ներն եր զրել յեկողը:

Շուկաների հարցը այն ժամանակ .
ըիտաարդ մարքսիստներիս շատ եր հետաքըր-
բում:

Պետերուրդի մարքսիստական Մջանակնե-
րում այդ ժամանակ արդեն բյուրեղանում եր
մի առանձին հոսանք: Դրա եյությունը այն եր,
վոր հասարակական զարգացման պրոցեսները
այդ հոսանքի ներկայացուցիչներին թվում եյին
ինչ վոր մեխանիքական, սխեմատիկ բաներ:
Հասարակական զարգացումը այսպես հասկաց-
վելու դեպքում՝ մասսայի, պրոլետարիատի դե-
րը ընկնում եր միանգամայն: Մարքսիզմի նե-
ղափոխական դիալեքտիկան նետիում եր մի
կողմ, մնում եյին «զարգացման» մեռյալ «Փա-
զերը»: Այժմ, իհարկե, յուրաքանչյուր մարք-
սիստ կարող ե հերքել այդ «մեխանիքական»
տեսակետը, բայց այն ժամանակ Պետերուրդի
մեր մարքսիստական շրջանակները շատ եյին
հուզվում այդ առիթով: Մենք դեռ շատ քիչ ե-
յինք պատրաստված. մեզնից շատերը Մարքսից,
որինակ, վոչինչ չեյին կարդացել, բացի «Կա-
պիտակի» առաջին հատորից. անգամ «կոմու-
նիստական Մանիֆեստը» աչքով չեյին տեսել և
բնազով միայն զգում եյին, վոր այդ «մե-
խանիքականությունը» ուղղակի հակադրությունն
ե կենդանի մարքսիզմին:

Շուկաների հարցը սերտ կապ ուներ մար-
քսիզմի ըմբռնման այս ընդհանուր խնդիրների
հետ:

«Մեխանիքականության» կողմակիցները սո-
վորաբար շատ վերացական կերպով եյին մոտե-
նում խնդրին:

Այդ որվանից յերեսունից ավելի տարիներ
են անցել:

Տեսրը, վորի մասին խոսում եմ, դժբախ-
տաբար, չի պահվել:

Ուստի յես կարող եմ խոսել միայն այն
տպագործության մասին, վոր թողեց նա մեզ
վրա:

Շուկաների հարցը նորեկ մարքսիստի լու-
սաբանությամբ դրվում եր շատ կոնկրետ, կապ-
վում եր մասսաների շահերի հետ, ու ամբողջ
մոտեցման մեջ զգացվում եր հենց կենդանի
մարքսիզմը, վոր յերեսութները վերցնում եր ի-
բենց կոնկրետ գըությամբ և իրենց զարգաց-
ման մեջ:

Ուզում եյի մոտից ծանօթանալ նորեկին,
մոտից իմանալ նրա հայացքները:

Վաղիմիք իլյիչին յես տեսա բարիկենդանին
միայն: Վորոշված եր Ոխտում, ինժեներ կլաս-
սոնի մոտ, վորը Պետերբուրգի մեր ականավոր
մարքսիստներից եր և վորի հետ միասին յես

յերկու տարի առաջ մարքսիստական խմբակի
մեջ եյի, կազմել մի քանի մարքսիստների խոր-
հըրդակցություն Վոլգայից յեկածի հետ։ Գաղտ-
նապահության համար «բլինի»¹) հրավեր և
սարքաված։ Այդ տեսակցությանը, բացի Վլադի-
միր Իլյիչից, Կերկա եյին Կլասսոնը, Յակ. Պ.
Կորոբկոն, Սերեբրովսկին, Ստ. Իվ. Ռադչենկոն
և ուրիշները. պետք ե գային Պոտրեսովը և
Ստրուվեն, Բայց, Կարծեմ, չեկան։ Յես հիշում
եմ մի մոմենտ։ Խոսում եյին այն ուղիների մա-
սին, վորոնցով պետք եր գնալ։ Ըսդհանուր լե-
զու, կարծես թե, չեր գտնվում։ Մեկը, կարծեմ
Շելյագինը ասաց, վոր շատ կարեոր ե աշխա-
տանքը գրագիտության կոմիտեյում։ Վլադիմիր
Իլյիչը ծիծաղեց, և նրա ծիծաղը մի տեսակ չար
և չոր հաշեց. յես այնուհետև յերբեք այդպիսի
ծիծաղ չեմ լսել նրանից։

«Եհեւ, ինչ, ով ուզում է թող հայրենիքը
փրկի գրագիտության կոմիտեյում—մենք չենք
խանդարի»:

Յես կորոբկոյի հետ նստած եյի հարևան
սենյակում և բաց դռնից լսում եյի նրանց խո-
սակցությունը, կլասսոնը մոտեցավ և հուղված,
միքուքը փետելով, ասաց. «Սատանան զիտի,

¹⁾ Բայինից յուղով տապակած բլիթ, խմբեցնեն, զբ ու ները պատրաստում են գլխավորապես բարեկանանին:

թե դա ինչեր ե ասում»: «Ի՞նչ ե վոր—ասաց
կողոքկոն.—Նա իրավացի յե, մենք ի՞նչ հեղա-
փոխականներ ենք»:

Պետք ե ասել, վոր մեր սերունդը գեռ պատահնի հասակում վկա յեր յեղել նարողովոլցիների՝ ցարիզմի դեմ վարած կովին, տեսել եր, թե ինչպես լիբերալ «հասարակությունը» ամեն կերպ «համակրում եր» նրանց, բայց նարողնայա վոյլա կուսակցության քայլքայումից հետո, վախից պոչը իրեն քաշեց. նա վախենում եր ամեն մի շարժումից, ու սկսվեց «մանր գործերի» քարոզը:

Վաղիմիր իլյիչի շար նկատողությունը հասկանալի յեր: Նա յեկել եր խոսելու, թե ինչպես միասին դուրս գան պայքարի, բայց ի պատասխան լսեց գրագիտության կոմիտեյի բրոցյուր-ները տարածելու կոչը:

Հետո, յերբ մենք մոտից ծանոթացնք,
Վաղիմիր իլիչը պատմեց մի անգամ, թե ինչ-
պես եր վերաբերվել «հասարակությունը» իր
մեջ յեղբոր ձերբակալության։ Բոլոր ծանոթնե-
րը յերես թեքեցին Ույանովսերի ընտանիքից։
Եր այցելությունները ընդհատեց անգամ ծերուկ
ուսուցիչը, վոր առաջ յերեկոները գալիս եր
միշտ շահմատ խաղալու։ Այն ժամանակ Սիմ-
բերսկը գես յերկաթուղի չուներ. Վաղիմիր իւ-

յիշե մայրը ստիպված եր ձիով գնալ մինչև
Սիզըան, վորպեսդի մեկնի Պետեղըուրդ, ուր
բանտարկված եր վորդին: Վլադիմիր Իլյիչին
ուղարկում են ուղեկից գտնելու—վոչ-վոք չե
ցանկանում կալանավորի մոր հետ ճանապարհ
գնալ:

Այս ընդհանուր վախկոտությունը իր վրա,
Վլադիմիր Իլյիչի ասելով, շատ ուժեղ տպավո-
րություն ե թողնում:

Պատամնելական այս ապրումը, անկասկած իր
կնիքն զբեց Վլադիմիր Իլյիչի գեղի «հասարակու-
թյունը», գեղի լիբերալներն ունեցած վերաբեր-
մունքի վրա: Նա պատահի հասակից իմացավ,
թե ինչ արժեք ունի ազատամիտ շաղակըատանքը:

1894թ. աշնանը Վլադիմիր Իլյիչը իր «Эко-
номическое содержание народничества и
критика его в книге г. Струве» հոդվածում
գրեց. «բուրժուագիան տիրում ե և կյանքում
և հասարակության մեջ: Թվում եր թե պետք ե
ալովի հասարակությունից յեվ դիսել բուրժուա-
գիայի հակոտնյային (անտիպոլին)» (Собр. соч.,
т. II, стр. 18):

Յեվ տպա.

«Դուք (նարոդնիկներ)… բուրժուաների պաշտամանակ մենակ մնալու, վորպեսդի կարելի լինի
շապանության ցանկությունը վերաբերում եք նը-կենտրոնանալ: Նրանք սովորաբար ապրում եյին
ըան… վո՛ աշխատավոր դասակարգի իդեոլոգներից իմասին, մի ժամանակ առանձին տան մեջ, և

պահանջում ե միանգամայն անջատվել այդ աւար-
քերից և բացառապես ծառայել նրան, ով «կը-
տրված ե» բուրժուական հասարակության «կյան-
քից» (նույն տեղը, եջ 54):

Հայտնի ե Վլադիմիր Իլյիչի տեսակետը գե-
ղի լիբերալները, նրա անվատահությունը գեղի
նրանց, մշտական մերկացումները… Յես բերի
միայն մի քանի ցիտատ, վոր վերաբերում են
այն տարվան, յերբ խորհրդակցություն յեղակ
կլասսունի բնակաբանում:

«Բլինի»-ի հրավերքին մինչև վերջը չխոսեցին,
իհարկե: Վլադիմիր Իլյիչը խոսում եր քիչ. ավե-
լի դիտում եր հասարակությունը: Մարդիկ, վոր ի-
րենց մարքսիստ եյին անվանում, անհարմար ե-
յին զգում Վլադիմիր Իլյիչի սկեռուն հայացքի
առաջ:

Հիշում եմ, յերբ մենք Ոխտիից տուն եյինք
վերադառնում Նեայի մոտով, ինձ տուաջին ան-
դամը լինելով պատմեցին Վլադիմիր Իլյիչի յեղ-
ալովի մասին:

Վլադիմիր Իլյիչը յեղբորը շատ եւ սիրում:
Նրանց ճաշակների մեջ ընդհանուր շատ բան
կար. յերկուսն ել կարիք եյին զգում յերկար

9

յերբ բազմաթիվ ջահելներից—հորեղբոր, հորաքընջ, քեռու տղաներից, աղջիկներից վորեն մեկը մտնում եր նրանց սենյակը, յեղբայրները ունեցին իրենց սիրած նախաղասությունը. «Բախտավորեցրեք ձեր բացակայությամբ»: Յերկու յեղբայրն ել կարողանում եյին համառ աշխատել, յերկուսն ել տրամադրված եյին հեղափոխականորեն: Բայց հասակների տարբերությունը, հավանորեն զգալ եր տալիս իրեն: Ալեքսանդր Իլյիչը ամեն բանի մասին չեր խոսում Վլադիմիր Իլյիչի հետ:

Անա թե ի՞նչ եր պատմում Վլադիմիր Իլյիչը: Յեղբայրս բնագետ եր: Վերջին ամառը յերբ նա տուն յեկավ, դիսերտացիա եր պատրաստում ողափոր ճիճուների մասին, և բոլոր ժամանակ աշխատում եր մանրադիտակով: Վորպեսզի մաքսիմում լույս ոգտագործի՝ նա վեր եր կենում արշալույսին և իսկույն ձեռնարկում աշխատանքի: «Չե՛, յեղբօրիցս հեղափոխական դուրս չի գա, մտածում եյի յես այն ժամանակ, —պատմում եր Վլադիմիր Իլյիչը, —հեղափոխականը չի կարող այսքան ժամանակ նվիրել ողափոր ճիճուների ուսումնասիրության»: Բայց շուտով տեսավ թե ինչպես սխալվում եր:

Յեղբօր ճակատագիրը, անկասկած խորապես աղքում ե Վլադիմիր Իլյիչի վրա: Այդ բանում

մեծ դեր ե խաղում այն, վոր Վլադիմիր Իլյիչը մինչև այդ՝ շատ բանի մասին արդեն մտածում ե անկախորեն և իր համար վճռում ե արդեն հեղափոխական պայքարի խնդիրը:

Յեթե դա այլ կերպ լիներ, յեղբոր ճակատագիրը միայն խոր վիշտ կպատճառեր նրան, կամ, լավագույն դեպքում, նրա մեջ կառաջացներ վճռականություն ու ձգտում՝ յեղբոր ճանապարհով գնալու: Սակայն, տվյալ պայմաններում, յեղբոր ճակատագիրը լարում ե լոկ նրա մաքի աշխատանքը, մշակում ե նրա մեջ անսովոր զգաստություն, ճշմարտության աչքերին նայելու կարողություն, թույլ չտալով մի բռպե անգամ ֆրազներով, ցնորքներով հրապուրվելու, մշակում ե նրանում մեծագույն ազնվություն՝ բոլոր հարցերին մոտենալու մեջ:

II

1894—1898

1894թ. աշնանը. Վլադիմիր Իլյիչը մի խըմբակում կարդաց իր «Ճրցեա Նարօդա» ն: Հիշում եմ, ինչպես բոլորին հափշտակեց այդ գիրքը: Նրա մեջ անսովոր պարզությամբ գըրված եր պայքարի նպատակը: Այսուհետեւ «Ճրցեա Նարօդա»-ն հեկտողագով տպված՝ ձեռքից ձեռք անցավ «զեղին տետրեր» անունով, վորոնք

ստորագրություն չելին կրում։ Տետրերը ընթերցողների բավական լայն շրջան ունելին և վոչ մի կասկած չկա, վոր նրանք ուժեղ ազդեցություն ունեցան այն ժամանակվա մարքսիստ յերիտասարդների վրա։ 1896 թվին, յերբ յես Պալտավա ելի, Պ. Պ. Ռումյանցել, վոր այն ժամանակ ակտիվ սոցիալ-դեմոկրատ եր և բանտից հենց նոր եր դուրս յեկել, «Ճրշեա Հարօդա»։ Նընորոշեց, վորպես հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տեսակետի լավագույն, ուժեղ և լի-ակատար ձևակերպումը։

1894—95 թ. թ. ձմեռը յես արդեն բավական մոտից ծանոթացա Վլադիմիր Իլիչին։ Նա նեվսկի Զաստավայի կողմը պարապում եր բանվորական խմբակներում, յես նույն տեղը չորս տարի յեր ուսուցչություն ելի անում Սմոլենսկի յերեկոյան-կիրակնորյա դպրոցում և բավական լավ գիտելի տրակտի կյանքը։ Խմբակի, վորի հետ պարապում եր Վլադիմիր Իլիչը, բանվորներից շատերը իմ՝ կիրակնորյա դպրոցի աշակերտներից ելին—Բարուշին, Բորովկով, Գրիբակին, Արսենի և Ֆիլիպ Բողրովներ, Ժուկով և ուրիշներ։ Այն ժամանակները յերեկոյան-կիրակնորյա դպրոցը գեղեցիկ միջոց եր լայն կերպով ծառաթանալու բանվորական մասսայի առորյա կյանքին, աշխատանքի պայմաններին ու արա-

մաղրության։ Սմոլենսկյան դպրոցը ուներ 600 մարդ, չհաշված յերեկոյան տեխնիքական դասընթացները և նրան միացած կանանց և Որուխովյան դպրոցները։ Պետք ե ասած, վոր բանվորները «վարժուհիներին» վերաբերվում ելին անսահման հավատով։ Գրումովսկիների փայտեղնի պահեստների պահապանը ուրախ դեմքով զեկուցում եր վարժուհուն, վոր իրեն վորդի յեծնվել։ Թոքախտավոր մանածագործը, վարժուհուն, գրադիտություն սովորեցնելու համար, ցանկանում եր քաջարի փեսացու. աղանդավոր բանվորը, վոր ամբողջ կյանքը աստված եր. վորոնել, բավականությամբ զրում եր, թե Ռուդակովից (դպրոցի մյուս ուսուցչից), ավագ շաբաթվա տոնին, խմացել ե, վոր բնավ աստված չկա, և իրեն այնպես թեթև ե զգացել, վորովներեկ չկա ավելի վատ բան, քան աստծո ստրուկ լինելը, վորովնետե այդ գեպքում չես կարող ձայն հանել, իսկ մարդու ստրուկ լինելը—հեշտ ե—այստեղ կարելի յե կովել. ամեն կիրակի, մինչ չե մարդկային կերպարանքի կորստի աստիճանը հարբող ծխախոտավաճառը, վորից այնպես ծխախոտի հոտ եր գալիս, վոր նրա տերակի վրա կունալիս՝ մարդու գլուխը պտտվում եր,—կեռ չանգերով, առանց ձայնավորների գրում եր, վոր փողոցում յերեք տարեկան աղ-

ջիկ են գտել, ապրում ե իրենց արտելում, պետք ե վոստիկանության հանձնել, բայց խըղ-ձում ե. յեկավ մի պատահի զինվոր և պատ-մեց, թե Միխայլան, վոր անցյալ տարի ձեզ մոտ գրագիտություն եր սովորում, մասվեց աշխատան-քի ժամանակ, մեռավ, և մեռնելիս հիշեց ձեզ ու հրամայեց վողջունել և վողջություն ցանկալ ձեզ. մանածագործ բանվորը, վոր սարի պէս կանգ-նած եր թագավորի և տերտերների յետել, նա-խազգուշացնում եր զգուշանալ «այն սեվից, քա-նի վոր նա շարունակ թրե և գալիս կարոխով-յան փողոցում». մի հասակավոր բանվոր ասում եր, վոր յեկեղեցու յերեցփոխությունը չի կա-րող թողնել, «վորովհետև տերտերները սարսա-փելի խարում են ժողովրդին և նրանց դիմակը պետք ե պատռել իսկ յեկեղեցուն ինքը բոլորովին կողմնա-կից չե ու զարգացման ֆաղերը ափելի լավ գիտի» և այլն և այլն: Կազմակերպության մեջ յեղած բան-վորները գալիս եյին դպրոց, վորպեսզի նայեն թե, ում կարելի յե կաղմակերպության մեջքաշել: Բո-լոր վարժուհիները նրանց համար մեկ չեյին. նրանք տարբերում եյին, թե նրանցից ո՞վ վորքան պատ-րաստված ե: Յեթե ճանաչում են, վոր վարժու-հին «իրենցից ե», մի վորե ենտիմադասությամբ հասկացնում են այդ, որինակ, տնայնագործա-կան արդյունաբերության խնդրի նկատմամբ

կասեն՝ «անայնագործը չի կարող խոշոր արտա-դրության մրցությանը դիմանալ», կամ հարց կտան. «իսկ ի՞նչ տարբերություն կա Պետեր-բուրգի բանվորի և Արխանգելսկի գյուղացու միջև», ու զբանից հետո արդեն վարժուհուն նայում են ուրիշ հայացքով և ուրիշ կերպ են բարեւում. «մերն ե, գիտենք»:

Ինչ վոր պատահեր գործառեղում, իսկույն և եթ կպատմեյին. գիտեյին, վոր վարժուհիները կհայտնեն կազմակերպության:

Կարծես մի ինչ-վոր լուռ համաձայնություն կար:

Դպրոցում, իսկապես ամեն ինչի մասին կա-րելի յեր խոսել, չնայած վոր ամեն դասարա-նում լրտես կար. պետք եր միայն գործ չածել սարսափելի բառեր՝ «թագավոր», «գործառուլ» և այլն, ու կարելի յեր շոշափել ամենահիմնական խնդիրներ: Իսկ պաշտոնապես արգիլված եր վոր-ե բանի մասին խոսել. մի անգամ փակեցին այսպես անվանված կը կնողական խմբակը նրա համար, վորովինետև այնտեղ, ինչպես տեսել եր վրա համնող վերատեսուչը, ավանդել եյին տաս-նորդական կոտորակները, իսկ ծրագրով թույլա-տրվում եր սովորեցնել միայն թվաբանական չորս գործողությունը:

Այդ ժամանակ յես ապրում եյի Ստարո-նեվսկում. մի աան մեջ վոր անցավի բակ ու-

ներ։ Վլադիմիր Իլյիչը կիրակի որերը, խըմ-բակի զբաղմունքից դառնալիս, սովորաբար զալիս եր ինձ մոտ, ու սկսվում ելին անվերջ գրույցներ։ Յես այն ժամանակ սիրահարված եյի գպրոցի վրա. ինձ կարելի յեր հաց չտալ, բայց թույլ տային միայն խոսեյի զպրոցի մասին, աշակերտների մասին, Սեմյաննիկովի, Տորնտոնի, Մակսվելի և Նեվուկի թաղի այլ ֆաբրիկաների մասին։ Վլադիմիր Իլյիչը հետաքըլք-քրվում ե ամեն մի մանրունքով, վոր վերաբերում եր բանվորների կյանքին, կենցաղին, ու առանձին գծերով աշխատում եր ընդգրկել բան-վորի կյանքը իր ամբողջությամբ, գտնել այն, ինչից կարելի յե բռնել, վորպեսզի լավապես մոտենա բանվորին հեղափոխական պրոպագան-դով։ Այն ժամանակվա ինտելիգենտների մե-ծամանությունը բանվորներին վատ եր ճանա-չում։ Ինտելիգենտը գալիս եր խմբակը և բան-վորներին կարծես դասախոսություն եր կար-դում։ Յերկար ժամանակ խմբակներում «անց-նում եյին» ենդեմի «Ընտանիք, սեփականու-թյուն և պետություն» գրքույկը, ձեռագիր թարգ-մանությամբ։ Վլադիմիր Իլյիչը բանվորներին կարդում եր Մարքսի «Կապիտալը», նրանց բա-ցարում եր այն, իսկ զբաղմունքի յերկրորդ մասը նվիրում եր հարց ու փորձի. բանվորներին

հարցնում եր նրանց գործի, աշխատանքի պայ-մանների մասին և ցույց եր տալիս, թե նրանց կյանքը ինչ կապ ունի հասարակական ամբողջ կազմի հետ, առելով, թե ինչ և ինչպիսի ճանա-պարհներով կարելի յե վերափոխել գոյություն ունեցող կարգը։ Տեսականի և գործնականի կապը —ահա ինչն եր Վլադիմիր Իլյիչի խմբակներում կատարված աշխատանքի առանձնահատկությու-նը։ Հետզհետե այդպիսի մոտեցում կիրառել սկսեցին մեր խմբակի և մյուս անդամները։ Յերբ հետեւալ տարում լույս աեսավ Վելինսկի «Օ ա-րիտազն» գրքույկը—հողը թուուցիկային ագի-տացիայի համար միանգամայն պատրաստ եր արդեն, պետք եր միայն գործի անցնել։ Բան-վորների ամենորյա կարիքների շուրջը տարգող ագիտացիայի մեթոդը, մեր կուսակցական աշխա-տանքի մեջ խորը արմատներ ձգեց։ Յես այս մեթոդի ամբողջ արդյունավետությունը լիովին հասկացա շատ ուշ միայն, յերբ ապրում եյի տարագրության մեջ—ֆրանսիայում, և տեսա, թե ինչպես Փարիզում պոստատարների հոկա-յական գործադուլի ժամանակ ֆրանսական սո-ցիալիստական կուսակցությունը բոլորովին մի կողմ եր կանգնած և չեր մասնակցում այդ գոր-ծադուլին։ Դա իբր թե արհմիությունների գործն եր։ Նրանք կուսակցության գործը հա-

մալում եյին քաղաքական պայքարը միայն։
Տնտեսական և քաղաքական պայքարի միության
անհրաժեշտությունը նրանց համար միանգա-
մայն պարզ չեր։

Այս ժամանակ Պետրոգրադում աշխատող ըն-
կերներից շատերը, տեսնելով թուցիկային ագի-
տացիայի եֆֆեկտը, աշխատանքի այդ ձևով տար-
ված՝ մոռացան, վոր դա մասսայի մեջ աշխա-
տանք կատարելու ձեռից մեկն ե, վոչ միակը,
և գնացին չարաբաստիկ «եկոնոմիզմի» ճանա-
պարհով։

Վաղիմիր Իլյիչը յերբեք չեր մոռանում աշ-
խատանքի մյուս ձեռից։ 1895 թ. նա գրում եր
«Объяснение закона о штрафах, взимаемых с
рабочих на фабриках и заводах» գրքույկը, վորի
մեջ վաղիմիր Իլյիչը փայլուն որինակ տվեց,
թե ինչպես պետք է մոտենալ այն ժամանակվա-
միջակ-բանվորին և, նրա կարիքներից յելելով,
քայլ առ քայլ մոտեցնում են նրան քաղաքական
քայքարի անհրաժեշտության խնդրին։ Այս գըր-
քույկը շատ ինտիլիգենսիաների թվաց ձանձրալի,
ձգձգված բայց բանվորները կլանում եյին այն։
Գրքույկը նրանց հասկանալի յեր և հարազա-
(գրքույկը տպվել եր նարոգովլցիների տպարա-
ժամում և տարածվել բանվորների շրջանում)։ Այդ

սիրում եր գործարանային որենքները, գտնելով,
վոր այդ որենքները բացատրելով, առանձնա-
պես հեշտ կլինի բացատրել բանվորներին; թե
իրենց զբությունը ինչ կապ ունի պետական
կազմի հետ։ Այս ուսումնասիրության հետքերը
յերեւմ են այն ժամանակ բանվորների համար
գրած մի շարք հոդվածների և գրքույկների մեջ—
«Новый Фабричный закон», «Гражданская стачка», «О
стачках», «О промышленных судах» և այլ հոդ-
վածներում։

Բանվորական խմբակներ հաճախելը, իզուր
չանցավ. սկսվեց ուժեղ հետախուզություն։ Մեր
ամբողջ խմբից կոնսպերացիայի գործին ա-
մենից ավելի հմուտ եր վաղիմիր Իլյիչը. նա
գիտեր բոլոր անցքերը, հրաշալի կերպով խաբում
եր լրտեսներին, սովորեցնում եր մեզ, թե ինչ-
պես գրել գրքերում քիմիայով, ինչպես գրել
կետերով, պայմանական նշաններ դնել, հնարում
եր ամեն տեսակ մականուններ։ Ըստհանրապես
զգացգում եր, վոր նարոգովլցիների ձեռը լավ
սովորել եր։ Ի զուր չեր, վոր նա այնպես հար-
գանքով եր խօսում հին նարոգովոլեց Միխայլովի
մասին, վորը իր կոնսպերատիվ ընդունակության
համար ստացել եր «դռնապան» մականունը։
Հետախուզությունը հետզհետե լայն չափեր եր
ընդունում, և վաղիմիր Իլյիչը պնդում եր, վոր

պետք ե մեկը նշանակվի «գահաժառանգ», վորին չեն հետևում և նրան պետք ե հանձնել բոլոր կապերը, հանգույցները: Վորովինետև ավելի «մաքուր» մարդը յես ելի, վորոշվեց «գահաժառանգուհի» նշանակել ինձ: Զատկի առաջին որը մեզ զանից 5—6 հոգի «զատիկը տոնելու» գնացինք Յարսկու Սելո, մեր խմբակի անդամներից մեկի—Սիլվինի մոտ, վոր այնտեղ դասեր տալով ապրում եր: Գնացքով գնում եյինք իբրև անծանոթներ: Համարյա ամբողջ որը նստեցինք քննելու, թե ինչ կապեր պետք ե պահպանել: Վլադիմիր Իլյիչը սովորեցնում եր ծածկագրություն: Գրեթե զրքի կեսը ծածկագրեցինք: Ավազ, հետո յես չկարողացա ջոկել այդ առաջին կողեկանիվ ծածկագրությունը: Մի միաթարանք կար. այն ժամանակ, յերբ հարկ յեղավ ծածկագրությունը բացել՝ «կապերի» ահագին մեծամասնությունը արդեն խորտակված եր:

Վլադիմիր Իլյիչը ինսամքով հավաքեց այդ «կապերը». ամեն տեղ վորոնում եր մարդիկ, վոր կապանային այսպես թե այնպես պիտանի լինել հեղափոխական աշխատանքի: Հիշում եմ, մի անգամ, Վլադիմիր Իլյիչի նախաճեռնությամբ յեղավ մեր խմբակի ներկայացուցիչների (Վլադիմիր Իլյիչը և կարծեմ, կրժիքանովսկին) խորդիկացությունը կիրակնորյա դպրոցի մի խումբ

վարժուհիների հետ: Սրանք բոլորը հետո սոյշումով կրասներ դարձան: Դրանց մեջ եր կիդիա Միխայլովսա կնիպովիչը, հին նարոդովոլեց, վոր վորոշ ժամանակից հետո հարեց սոց. գեմովկրատներին: Կուսակցական հին աշխատավորները հիշում են նրան: Հեղափոխական մեծ տոկունության տեր, խստապահանջ դեպի ինքը և ուրիշ ները, մարդկանց լավագես ճանաչող, սքանչելի ընկեր, վոր սիրով և հոգածությամբ շրջապատում եր նրանց, ում հետ աշխատում եր. կիդիան իսկույն և եթ գնահատեց Վլադիմիր Իլյիչին, վորպես հեղափոխականի: Նա իր վրա վերցրեց նարոդովոլցիների տպարանի հետ հարաբերություն պահպանելու գործը: Խոսում, պայմանավորվում, ձեռագրները հանձնում եր և այնաեղից ստանում եր արդեն տպագրված գրքույներ, կողովսերով դրանք տանում եր իր ծանոթների մոտ և կապմակերպում եր բանվորներին գրականություն ցրելու գործը: Յերբ կիդիան ձերբակալվեց,—դավաճանի, տպարանի գրաշարի ցուցմունքով,—նրա զանազան ծանոթների մոտից գրավվեցին տասներկու կողով արգելված գրքույներ: Նարոդովոլցիները այն ժամանակ բազմաթիվ բրոցյուրներ եյին տպում բանվորների համար—«Բանվորական որ», «Ո՞վ ի՞նչով ե ապրում», Վլադիմիր Իլյիչի «Տուգանք-

ների մասին» գրքույկը, «Սով-Արքան» և այլն։
 Նարոդովոլցիներից յերկուսը, վոր աշխատում
 ելին Լախտինի տպարանում, — Շապովալովս ու
 կատանակայան, այժմ կոմունիստական կուսակ-
 ցության շարքերումն են։ Լիդիա Միխայլովսան
 չկա արդեն։ Նա մեռավ 20 թվին, յերբ Դրիմը,
 ուր ապրում եր նա վերջին տարիները, սպի-
 տակների ձեռքին եր։ Մեռնելու, զառանցանքի
 մեջ, նա ձգուում եր գեղի յուրայինները, գեղի
 կոմունիստները, մեռավ իր համար թանկագին
 կոմունիստական կուսակցության անունը շրթունք-
 ներին։ Վարժուհիներից կային, կարծեմ, և Պ. Ֆ.
 Կուգելին, Ա. Ի. Մեշելյակովան (յերկուսն ել
 այժմ կուսակցության անդամներ) և ուրիշները,
 իսկ Նեվսկի Զաստավի այն կողմը վարժու-
 հու պաշտոն ուներ Ալեքսանդրա Միխայլովսա-
 կալմիկովան, — սքանչելի դասախոս (հիշում եմ
 նրա՝ պետական բյուտջեյի մասին բանվորներին
 կարդացած դասախոսությունը). այն ժամանակ
 նա գրապահեստ ուներ Լիտեյնի փողոցի վրա։
 Ալեքսանդրա Միխայլովսայի հետ մոտիկ ծանո-
 թացավ և Վլադիմիր Իլիչը։ Սարուվեն նլա-
 սանն եր, նրա մոտ լինում եր միշտ և Պոտրե-
 սովը, Սարուվեյի գիմնազիական ընկերը։ Հետա-
 գայում Ալեքսանդրա Միխայլովսան իր դրամով
 պահեց հին «Ասկրա»-ն մինչև 2-րդ համագու-

մարը։ Նա Սարուվեյին չհետևեց, յերբ, վերջինս
 անցավ լիբերալների կողմը, և միանգամայն մի-
 տացավ «Ասկրա»-ի կազմակերպությանը։ Նրա մա-
 կանունը «հորաքույր» եր։ Նա շատ լավ եր վե-
 րաբերվում Վլադիմիր Իլիչին։ Այժմ նա պառկած
 ե Գետսկոյի Սելոյի սանատորիայում և յենել
 չի կարողանում։ Բայց նրա մոտ յերբեմն գալիս
 են յերեխաներ հարկան մանկատներից։ Նա պատ-
 մում և նրանց Իլիչի մասին։ Անցյալ գարնան
 (1920 թ.) նա ինձ գրում եր, թե պետք ե ա-
 ռանձին զրբով հրատարակել Վլադիմիր Իլիչի 17
 թվի հոդվածները, վորոնք լի յեն բուռն և կրա-
 կոտ կոչերով, և վորոնք այնպես ազդում եյին
 այն ժամանակ մասսայի վրա։ 22 թվին Վլադի-
 միր Իլիչը Ալեքսանդրա Միխայլովսային ջերմ
 վողջույնի մի քանի խոսքեր գրեց, այնպիսի խոս-
 քեր, վոր միայն նա կարող եր գրել։ Ալեքսան-
 դրա Միխայլովսան սերտ կապված եր «Աշխա-
 տանքի Աղատագրության» Խմբակի հետ։ Մի ժա-
 մանակ (կարծեմ 99.ի թվին), յերբ Զասուլիչը
 յեկավ Ռուսաստան, Ալեքսանդրա Միխայլովսան
 տեղափորեց նրան անլեզալ կերպով և միշտ տե-
 սակցում եր նրա հետ։ Բանվորական աճող շարժ-
 ման ու «Աշխատանքի Աղատագրության» Խմբա-
 կի հողվածների և գրքերի ազդեցությամբ, նուի
 Պետերբուրգի սոց-պեմոկրատների ազդեցու-

թյամբ, Պոտրեսովը ձախացավ, մի առ ժամանակ ձախացավ և Ստրուվին։ Մի շարք նախնական ժողովներից հետո հող գտնվեց միասնական աշխատանքի համար։ Մտածեցին միասին հրատարակել «Материалы к характеристике нашего хозяйственного развития» ժողովածուն։ Մեր խմբակից խմբագրության մեջ մտան Վլադիմիր Իլյիչը, Ստարկովը և Ստեփան Իվ. Ռազզենկոն, Նրանցից՝ Ստրուվին, Պոտրեսովը և Կաստոնը։ Ժողովածույթին վիճակված բախտը հայտնի յէ։ Յարական գրաքննությունը այրեց այն։ 1895 թ. գարնանը արտասահման գնալուց առաջ Վլադիմիր Իլյիչը շուտ-շուտ գնում եր Ողերնի փողոցը, ուր ապրում եր Պոտրեսովը, շտապելով աշխատանքը վերջացնել։

1895 թ. ամառը Վլադիմիր Իլյիչը արտասահմանում, մասամբ ապրեց Բերլինում, ուր հաճախում եր բանվորական ժողովներ, մասամբ Շվեյցարիայում, ուր առաջին անգամ տեսավ Պլեխանովին, Աքսելլոդին, Զասուլիչին։ Յեկավ տպագրություններով լեցուն, արտասահմանից բերելով իր հետ կրկնակի ծալք ունեցող ճամպուկ, վորի պատերի աշանքը լցված եր անլեզալ գրականությամբ։

Խսկույն և եթ ոկսեցին կատաղի կերպով հետամտել Վլադիմիր Իլյիչին, հետեւում եյին նրան,

հետեւում եյին ճամպրուկին։ Ինձ ազգական մի աղջիկ այդ ժամանակ ծառայում եր ճասցեների սեղանում։ Վլադիմիր Իլյիչի գալուց յերկու որ հետո, նա պատմեց ինձ, վոր գիշերը, իր հերթապահության ժամանակ լրտեսը յեկել ե, ճասցեները քըքրել և պարձեցել։ «Հետևեցինք, գտանք պետական կարևոր հանցավոր Ուլյանովին, —նրա յեղբորը, կախել են, —ինքը յեկել ե, արտասահմանից, հիմա յել մեզանից չի պը ծնի»։ Իմանալով, վոր յես Վլադիմիր Իլյիչին ճանաչում եմ, իմ ազգականուհին շտապել եր այդ մասին հայտնել ինձ։ Յես, ինարկե, խսկույն և յեթ նախագուշացրի Վլադիմիր Իլյիչին։ Հարկավոր եր կը կնակի զգուշություն։ Բանը, ոտքայն, չեր սպասում։ Աշխատանքը ծավալվում եր։ Աշխատանքի բաժանում սահմանեցին, բաժանելով աշխատանքը ըստ թաղերի։ Սկսեցին կազմել և բաց թողնել թուուցիկներ։ Հիշում եմ, վոր Վլադիմիր Իլյիչը կաղմեց առաջին թուուցիկը՝ Սեմյաննիկովի գործարանի բանվորներին ուղղված։ Այն ժամանակ մենք վոչ մի տեխնիկա չունեյինք։ Թուուցիկը արտագրվում եր ձեռքով, տպագիր տառերով, տարածում եր Բաբուշկինը։ Զորս որինակից Զը պահակները վերցրել եյին, Զը անցել եր բանվորների ձեռքը։ Թուուցիկներ տարածվում եյին և ուրիշ թաղերում։ Այսպես, Վասիլիսկի Ռոտրո-

վում կաղմվել եր թռուցիկ՝ լաֆերմի ծխախո-
տագործարանի բանվորուհիներին ուղղված։ Ա.
Ա. Յակուբովան և Զ. Պ. Նեվորովան (Կրժիժա-
նովսկայա) տարածման այսպիսի միջոցի եյին
դիմում։ Թռուցիկները վոլորում եյին խողովակա-
ձե, այսպես, վորհարմար լինի հատհատվերցնելու,
և գողնոցները համապատասխան ձեռվ սարքելով՝
նրանք սուլիչի ձայնը լսելուն պես, արագ քայ-
լերով գնում եյին խիտ խմբերով գործարանի
զոներից զուրս յեկող բանվորուհիներին ընդա-
ռաջ և զրեթե վազում եյին նրանց կողքով, թռ-
ուցիկները խցկելով տարակուսած բանվորուհի-
ների ձեռքը։ Թռուցիկը հաջողություն ուեցավ։
Թռուցիկները, գրքույկները շարժեցին բանվոր-
ներին։ Վորոշվեց հրտարակել նաև հանրա-
մատչելի ժուրնալ, — «Բախոչե Ջելօ» — գեռ լավ
վոր տպարան կար։ Վաղիմիր իլլիչը խնամ-
քով նյութ եր պատրաստում նրա հոմար։ Յու-
րաքանչյուր տող նրա ձեռքից եր անցնում։ Հի-
շում եմ իմ բնակարանում մի ժողով, յերբ Զա-
պորոժիցը, անսովոր վոգեորությումբ պատմում
եր այն նյութի մասին, վորհածողել եր հավաքել
Մոսկովյան Զաստավի այն կողմը գտնվող կոշկի
գործարանում։ «Ամեն ինչի համար տուգանում
են, պատմում եր նա, — կըունիր մի քիչ ծուռ ես
դնում — իսկույն առողջանք»։ Վաղիմիր իլլիչը ծի-

ծաղեց «Դե, յեթե կրունկը ծուռ ե կպցնում,
այդ ժամանակ տուգանքը, ասենք, տեղին ե»։
Նյութը խնամքով հավաքում և ստուգում եր
վաղիմիր իլլիչը։ Հիշում եմ, որինակ, ինչպես
նյութ հավաքվեց Տորնտոնի ֆաբրիկի մասին։
Վորոշվեց, վոր յես Տորնտոնի ֆաբրիկից՝ ինձ
մոտ կկանչեմ իմ աշակերտին, բրակովշչեկ Կրո-
լիկովին, վոր արգեն առաջ աքսորված եր յեղել
Պետերբուրգից, և նրանից, Վաղիմիր իլլիչի վորո-
շած նախագծով կհավաքեմ բոլոր տեղեկություն-
ները։ Կրոլիկովը յեկավ ինչ վոր մեկից վերցրած
գեղեցիկ մուշտակ հագած, բերեց տեղեկություն-
ների մի ամբողջ տեար, վորոնք գեռ լրացրեց բե-
րանացի։ Տեղեկությունները շատ արժեքավոր ե-
յին, Վաղիմիր իլլիչը ուղղակի հարձակվեց նրանց
վրա։ Հետո յես Ապոլինարի Ալեքսանդրովսա Յա-
կուբովայի հետ՝ գլխաշոր կապած և մեղ բանվո-
րուհիների տեսք աված՝ գնացինք Տորնտոնի ֆա-
բրիկի հանրակացարանը։ յեղանք և ամուրիների
և ընտանիքավորների մասում։ Պայմանները
սարսափելի եյին։ Այսպես հավաքված նյութերի
հիման վրա միայն Վաղիմիր իլլիչը գրում եր
թղթակցություններ և թռուցիկներ։ Նայեցեք նրա
Տորնտոնի ֆաբրիկի բանվորուհիներին ուղղած
թռուցիկը։ Գործին ինչպիսի մանրամասնորեն
տեղյակ լինելն ե նկատվում նրանում։ Յեզ վոր-

պիսի՝ դպրոց եր դա այն ժամանակ աշխատող ընկերների համար։ Անա թե յերբ սովորեցին «ուշադրություն դարձնել մանր բաններին»։ Յեզ վորքան խորը դրոշմվեցին այդ մանրունքները մարդկանց գիտակցության մեջ։

Մեր «Ռաбоչee Ջելօ» լույս չտեսավ։ 8-ին իմ բնակարանում ժողով եր, ուր վերջնականապես կարդացվեց արդեն տպագրության համար պատրաստի համարը։ Դա յերկու որինակ ուներ։ Մի որինակը վերցրեց Վանենը՝ վերջնականապես նայելու, մյուսը մնաց ինձ մոտ։ Առավոտյան յես գնացի Վանենի մոտ՝ ուղղված որինակը վերցնելու, բայց սպասավորն ասաց, վոր մի որ առաջ գնաց ել եքնակարանից։ Առաջուց մենք Վլադիմիր Իլյիչի հետ պայմանավորվել ենքնք, վոր կասկածի գեպքում տեղեկություններ հավաքեմ նրա ծանոթից—իմ պաշտոնակից Զեբոտարյովից յերկաթուղային զլխավոր վարչության մեջ, ուր յես այն ժամանակ ծառայում եյի։ Վլադիմիր Իլյիչը ամեն որ ճաշում և լինում եր այստեղ։ Զեբոտարենվան ծառայության տեղում չեր։ Գնացի նրա բնակարանը։ Վլադիմիր Իլյիչը ճաշի չեր յեկել։ Պարզ եր, վոր նա ձերբակալված ե։ Յերեկոյան դեմ պարզվեց, վոր մեր խմբակից շատ մարդ է ձերբակալված։ Ինձ մոտ պահպող «Ռաбоչee Ջելօ»-ի մի որինակը յես տարտ նիսա Ալեքսանդրովս Հերդի—իմ գիմ-

նազիական ընկերունու—Ստրուվեյի ապագա կնոջ մոտ պահելու։ Վորակեսպի ձերբակալվածներին ավելի նեղը չձգենք—վորոշվեց «Ռաбоչee Ջելօ»-ն առայժմ չապել։

Վլադիմիր Իլյիչի աշխատանքի Պետերբուրգյան այս շրջանը անչափ կարեսը շրջան եր, բայց ըստ եյության դա անտեսանելի, անմկատելի աշխատանք եր։ Նա ինքը այդպես բնորոշեց այն։ Այդ աշխատանքի մեջ արտաքին եֆֆեկտ չկար։ Հարցը վերաբերում եր վոչ թե հերոսական գործերի, այլ նրան, թե ինչպես սերտ կապ ստեղծել մասսայի հետ, մոտենալ նրան, սովորել նրա լավագույն ձգտումների արտահայտիչը լինել, սովորել նրան մոտիկ և հասկանալի լինել և նրան տանել իր յետեկց։ Բայց Պետրոգրադյան աշխատանքի հենց այդ շրջանում եր, վոր Վլադիմիր Իլյիչից կոփվեց բանվորական մասսայի ղեկավարը։

Յերբ մեր ընկերների ձերբակալությունից հետո առաջին անգամ դպրոց գնացի, Բաբուշկինը կանչեց ինձ անկյունը՝ աստիճանների տակ և այդտեղ հանձնեց ինձ բանվորների՝ ձերբակալման առիթով գրած թուոցիկը։ Թուոցիկը զուտ քաղաքական բնույթ ուներ։ Բաբուշկինը խնդրեց թուոցիկը հանձնել բազմացնելու և տալ իրենց տարածելու համար։ Մինչ այդ իմ և նրա միջև յեր-

բեք ուղղակի խոսակցություն չեր յեղած, վոր
յես կապված եմ կազմակերպության հետ: Յես թը-
ռուցիկը հանձնեցի մերոնց: Հիշում եմ այդ ժողո-
վը—Ստ. Իվ. Ռազչենկոյի բնակարանումն եր: Հա-
վաքվել եյին խմբակի մնացած անդամները, թոռ-
ցիկը կարգալով՝ Լյախովսկիին բացականչեց: «Մի-
թե կարելի յե այս թռուցիկը տպել, սա գրված ե
զուտ քաղաքական թեմայով»: Սակայն, վորով-
հետև թռուցիկը անկասկած բանվորի գրած եր,
իր սեփական ձեռներեցությամբ, վորովհետև
նրանք՝ բանվորները, խնդրել եյին անպայման
տպագրել այն, վորոշվեց տպել: Այդպես ել ա-
րինք: Վաղիմիր Իլյիչի հետ շատ շուտով կապ-
հաստատվեց: Այն ժամանակիները բանտարկյալ-
ներին նախնական բանտարկության տեղում,
ինչքան ուղեք կարելի յեր գրքեր հանձնել. այդ
կրքերը նայում եյին բավական մտկերեսային
ձեռվ, վորի ժամանակ չեր կարելի, ի հարկե,
նկատել տառերի արանքի փոքրիկ կետերը կամ
զրքում, թղթի հաղիք նկատելի վորսված դույնը ուր
զրքում եր կաթնով: Գաղանի գրագրության տեխ-
նիկան արագորեն կատարելազործվեց մեզանում:
նիկան արագորեն կատարելազործվեց մեզանում:

թյուններ կար.—այս ինչին վոչ-վոք չի այցելում,
պետք ե նրա համար «հալմացու» գտնել, այս
ինչին տեսակցության ժամանակ ազգականների
միջոցով հայտնել, վոր բանակի գրադարանի այս
ինչ գրքի, այսինչ յերեսում նամակ վնասով,
այս ինչի համար տաք կոշիկներ գտնել և այլն:
Նա նամակագրություն ուներ նստող ընկերնե-
րեց շատերի հետ, վորոնց համար այդ նամա-
կագրությունը ահազին նշանակություն ունե-
ցավ: Վաղիմիր Իլյիչի նամակները առույգու-
թյուն եյին շնչում, խոսում եյին աշխատան-
քի մասին: Դրանք ստանալով, մարդ մոռա-
նում եր, վոր բանառում ե նստած և ինքն ել
սկսում եր աշխատել: Յես հիշում եմ այդ նա-
մակների տպագրությունը (1896 թ. ոգոստո-
սին յես ել բանտ նստեցի): Կաթնով գրած նա-
մակները դուրս եյին գնում գրքեր հանձնելու
որը—շաբաթ որերը: Նայում ես գրքում յե-
ղած պայմանական նշաններին և իմանում ես,
վոր գրքում նամակ կա: Ժամի վեցին յեռաց-
րած ջուր եյին տալիս, ապա վերհսկող կինը
քրեական հանցավորներին տանում եր յեկեղեցի:
Այդ ժամանակ կտրտում ես նամակը յերկար
շերտերով, թեյը յեփում ես, և հենց վոր վեր-
հսկող կինը գնում ե, սկսում ես շերտերը կա-
խել տաք թեյի մեջ—նամակի գրությունը յե-

բեռում ե (բանտում անհարմար եր նամակների գրությունը յերեան հանել մոմի վրա, ուստի վլադիմիր իլյիչը մտածեց բացել դրանք տաք ջրի մեջ), և այսպիսի առույգություն ե շնչում այդ նամակը, վոր կարդում ես կլանված հետաքրքությամբ։ Ինչպես գուրսը, ազատ ժամանակ վլադիմիր իլյիչը գտնվում եր բոլոր աշխատանքների կենտրոնում, այնպես ել բանտում նա հանդիսանում եր զրափի հետ հարաբերություն պահպանելու կենտրոն։

Դրանից բացի նաբանտում շատ եր աշխատում։ Այսաեղ ե յեղել նախապատրաստված „Քազ-վիտի Կապիտալիզմա“-ն։ Վլադիմիր իլյիչը լեզակ նամակներով պատվիրում եր հարկավոր նյութերը, վիճակագրական ժողովածուները։ «Ափառ'ս, շուտ բաց թողին, պետք եր մի քիչ ել մշակել գիրքը, Սիրիրում գիրք գտնելը դժվար ե», — հանաքով ասում եր Վլադիմիր իլյիչը։ Միայն «Քազ-վիտի Կապիտալիզմա»-ն չգրեց Վլադիմիր իլյիչը բանտում, գրում եր նաև թոռոցիկներ, անեկալ գրւաքույկներ, գրեց ծրագրի նախագիծը առաջին չամագումարի համար (վորը կայացավ միայն 1898 թ., բայց ծրագրվում եր ավելի վաղ) արտահայտվում եր կաղմակերպության մեջ քննվող հարցերի շուրջը։ Վորպեսզի չբոնեն իրեն կաթնով գրելու ժամանակ՝ Վլադիմիր իլյիչը հացից

շինուած եր կաթի փոքրիկ թանաքամաններ, վորոնք — հենց վոր գուան ողանցքը բացվում եր — քցում եր բերանը։ «Այսոր վեց թանաքամաննեմ կերել», — կատակով ավելացնում եր Վլադիմիր իլյիչը նամակի վեցջում։

Բայց վորքան ել Վլադիմիր իլյիչը տիրապետում եր իրեն, վորքան ելինքգինքը պահում եր վորոշուեցիմի շրջանակում, նրան ել, ինչպես յերեսում ե, պատում եր բանտային թալսիծը։ Նամակներից մեկում նա այսպիսի ծրագիր եր զարգացնում։ Յերբ նրանց տանում ելին զբոսանքի, միջանցքի մի լուսամուտից բոպեաչափ յերեսում եր Շպալերնայա փողոցի մայթի մի կտորը։ Յեվ նա անա մտածել եր, վոր մենք — յես և Ապոլինարյան Ալեքսանդրովսա Յակոբովան — վորոշ ժամին զայինք կանգնեյինք մայթի այդ կտորի վրա։ այդ ժամանակ նա մեզ կտեսնի։ Ապոլինարիան չկարողացավ ինչ վոր պատճառով գալ, իսկ յես մի քանի որ զնում եյի և յերկար կանգնում մայթի այդ կտորի վրա։ Միայն թե այդ ծրագրից, չգիտեմ ինչո՞ւ, վոչինչ դուրս չեկավ։

Մինչ Վլադիմիր իլյիչը նսուած եր, դուրսը աշխատանքը ծավալվում եր, բանվորական շարժումը աճում եր տարերայնորեն։ Մարտովի, Լյախովսկու և մյուսների ձերբակալումից հետո խմբակի ույժերը ավելի ես թուլացան։ Ճիշտ ե,

խմբակի մեջ մտնում եյին նոր ընկերներ. բայց
այդ մարդիկ արդեն գաղափարապես ավելի քիչ
եյին կոփած, իսկ սովորելու համար արդեն ժամա-
նակ չկար. շարժումը պահանջում եր սպասավո-
րում, պահանջում եր մեծ ույժ. ամեն ինչ գնում
գործազրկում եր ազիտացիայի համար, իսկ պրո-
պագանդայի մասին մտածելու ժամանակ չկար;
Թուղթիկային ազիտացիան մեծ աջողություն
ուներ: Թուղթիկները հաճախ գրվում եյին շտապ,
առանց կոնկրետ պայմանները ուսումնասիրելու:
Զուհակների գործադուլը 1896 թվին անցավ
սոցիալ գեմոկրատների ազգեցության ներքո և
շատերին վոգերեց: Հող ստեղծեց կոնոմիզմի
ծաղկման համար: Հիշում եմ, ինչպես մի անգամ,
(կարծեմ, ոգոստոսի սկզբին) ժողովում, վոր
Պավլովսկի անտառումն եր, Սիլվինը բարձրածայն
կարդաց թուղթիկինախազգիծը: Նրանում մի տեղ
մի նախադասություն կար, վոր բանվորական
շարժումը սահմանափակում եր միայն տնտեսա-
կան պայքարով: Կարդալով այդ՝ Սիլվինը կանգ
առավ. «Այ, զրել եմ հա, այնպես, ու ինձ զբր-
դեց» ասաց նա ծիծաղելով: Նախադասությունը
դուրս գցվեց: 1896 թվի ամառը մեծ աղմուկով
խափանվեց Լախտինի տպարանը, վերացավ գըշ-
քույկներ տպելու նարափորությունը, հարկա-
զրված յեղանք յերկար ժամանակով թողնել ժուր-
նալի հոգաը:

1896 թվի գործադուլի ժամանակ մեր խմբակի
մեջ մտավ Տախտարեկի խումբը, վոր հայտնի եր
«կապիկներ» մականունով և Զերնիշնի խումբը,
վոր հայտնի եր «աքլորներ»¹⁾ անունով: Բայց
քանի դեռ «գեղաբրիստները» նստած եյին բան-
տում և կապ եյին պահպանում դրսի հետ, աշխա-
տանքը ընթանում եր հին հունով: Յերբ Վլադիմիր
իլյիչը դուրս յեկավ բանտից, յես դեռ նստած
եյի: Չնայած տագնապին, վոր պատում եր բան-
տից դուրս յեկած մարդուն, Վլադիմիր իլյիչը
այնուամենայնիվ ինձնամակ գրեց գործերի մա-
սին: Մայրիկը պատմում եր, վոր նա բանտում
մինչև անգամ կազդուրվել եր և շատ ուրախ եր:
«Վետրովայի պատմությունից» շատ չանցած
(կալանավորունի վետրովան ինքոյինքը այլք բան-
տում) ինձ բաց թողին այն ժամանակ. — ժանդարմ-
ները բանակից բայց թողին մի շաբք կանանց, ու
մինչև գործի վախճանը թողին Պետերբուրգում,
յերկու լրտեսնշանակելով ինձ վրա, վորոնք ամեն
տեղ կրկնակոլս հետեւում եյին ինձ, Յես կազմակեր-
պությունը գտա ամենավաղբալի կացության
մեջ: Նախկին աշխատավորներից մնացել եր
միայն Ստեփան իվ. Ռադչենկոն և իր կինը: Նա
ինքը արդեն կոնսոլիդատիվ պայմաններով աշ-

¹⁾ Ողոստոսի 12-ին տեղի ունեցավ նոր տապալում. տապալ-
վեցին գըշեթե բոլոր «Ճերերը» և «աքլորների» լավագույն տարրերը:

խատանք տանել չեր կարող, բայց շարունակում եր կենտրոն լինել և կապ պահպանել: Կապ եր պահպանում և Ստրուվեյի հետ: Ստրուվեն շուտով ամուսնացավ Ն. Ա. Հերդի հետ, վոր սոցիալ-դեմոկրատուհի եր, Ստրուվեն ել այդ ժամանակ սոցիալ դեմոկրատություն եր անում: Նա բոլորովին ընդունակ չեր կազմակերպության մեջ աշխատանք տանելու, այն ել ընդհատակյա աշխատանք, բայց նրան անկասկած շոյում եր այն, վոր խորհուրդների համար դիմում ելին իրեն: Նա մինչև անգամ մանիֆեստ գրեց սոցդեմ. բան. կուսակցության: 1 համագումարի համար: 1897—98 թ. թ. ձմեռը յես բարձրական հաճախ, վլադիմիր Իլյիչի հանձնարարություններով, լինում եյի Ստրուվեյի մոտ — այն ժամանակ Ստրուվեն հրատարակում եր «Հոօօ Ըլօօ» ն—կ, բացի այդ ել, նիստ Ալեքսանդրովյայի հետ շատ բանով եյի կապված: Յես մոտից տեսա, զիտեցի Ստրուվեյին: Նա այդ ժամանակ անկեղծ սոցիալ-դեմոկրատ եր, բայց ինձ զարմացնում եր նրա՝ գրքի մարդ լինելը և այն, վոր նա բոլորովին չեր հետաքրքրվում «կենդանի կյանքով», հետաքրքրություն, վոր այնքան մեծ եր վլադիմիր Իլյիչի մոտ: Ստրուվեն ինձ համար թարգմանություն գտավ և ինքը հանձն առավ խմբագրել այն: Նա ըստ յերևույ-

թին նեղվում եր այդ աշխատանքից, շուտով հոգնում եր (վլադիմիր Իլյիչի հետ մենք ժամերով նստում եյինք նման աշխատանքի). Վլադիմիր Իլյիչը բոլորովին այլ կերպ եր աշխատում, տարվում եր աշխատանքով, անգամ, այնպիսի, ինչպիսին թարգմանությունները): Հանգստանալու համար Ստրուվեն վերցնում եր կարդալու ֆետի բանաստեղծությունները: Մեկը իր հշողությունների մեջ զբել եր, թե վլադիմիր Իլյիչը սիրում եր ֆետին: Դա ճիշտ չե: Ֆետը — ճորտատիրության մոլի պաշտպան եր, վորը չուներ և վոչ իսկ մի հարզելի բան, բայց Ստրուվեն ահա, իսկապես, սիրում եր ֆետին: Այն ժամանակ Ստրուվեն վլադիմիր Իլյիչին անկասկած շատ լավ եր վերաբերվում:

Յես ճանաչում եյի և Տուգան-Բարանովսկուն: Յես սովորել եմ նրա կնոջ՝ Լիդիա Կարլովնա Գալիդովայի («Եօջ Միօ»-ի հրատարակչունուալջիկը) հետ և մի ժամանակ հաճախում եյի նրանց տունը: Լիդիա Կարլովնան շատ խելացի և լավ, թեև անկամ կին եր: Նա իր մարդուց ավելի խելացի եր: Տուգանի խոսակցության մեջ զգացվում եր ոտար մարդ: Մի անգամ յես զիմեցի նրան գործադուլի համար (կարծեմ, կոստրոմայի) հանգանակության թուղթ ստորագրելու: Յես ստացա մի բան, չեմ հիշում վորքան, բայց ստիպ-

ված յեղա լսել դատողություններ այն իմաստով,
վոր «հասկանալի չե, թե ինչու պետք ե պաշտ-
պանել գործադուլը. գործադուլը բավականաչափ
իրական միջոց չե ձեռարկուների դեմպայքարե-
լու»։ Յես զրամը վերցրի և շտապեցի հեռանալ։

Յես Վլադիմիր Իլյիչին գրում եյի այն բոլորի
մասին, ինչ տեսնում եյի և լսում։ Սակայն, կազ-
մակերպության աշխատանքի մասին շատ քիչ
բան կարելի եր գրել։ Համագումարի ժամանակ-
ները կազմակերպության մեջ մնացել եյին միայն
չորս հոգի—Ստ. Իվ. Ռադչենկոն, Նրա կինը, Լյու-
բով Նիկոլայևնան, Սամմերը և յես։ Մեր պատ-
վիրակը յեղավ Ստեփան Իվանովիչը։ Բայց հա-
մագումարից վերապառնալով՝ նա շատ քիչ բան
պատմեց այն մասին, թե ինչ ե արվել այնտեղ։

Վճռեցին ինձ յերեք տարով աքսորել Ռուֆայի
նահանգը. ինդրեցի ուղարկել Մինուսինսկի գա-
վառի Շուշենսկ գյուղը, ուր ապրում եր Վլադիմիր
Իլյիչը, ու ինձ հայտարարեցի նրա «հարսնա-
ցուն»։

III

1898—1901

Մինուսինսկ, ուր յես գնացի իմ հաշվով, ինձ
հետ յեկավ և մայրս։ Կրասնոյարսկ հասանք 98 թ.
մայիսի մեկին. այդտեղից շոգենավով պետք ե
գնայինք Յենիսեյն ի վեր, բայց շոգենավերը

դեռ չեյին բանում։ Կրասնոյարսկում ծանոթա-
ցա նարողության վեց Տյուտչիկ և նրա կնոջ հետ,
վորոնք այդ բաներում վորձված մարդիկ, տե-
սակցություն սարքեցին ինձ համար Կրասնոյարս-
կով անցնող սոցիալ-դեմոկրատների խմբի հետ.
Որանց թվումն եյին ինձ հետ միևնույն գործով
դատապարտված ընկերներ—Լենկնիկը և Սիլվինը։
Զինվորները, աքսորյալներին լուսանկարչատուն
բերելով՝ նստեցին մի կողմ և սկսեցին ծամել
այն հացն ու յերշիկը, վորոնցով հյուրասիրե-
ցինք նրանց։

Մինուսինսկում գնացի տեսա մարտմեկյան
աքսորական Արկադի Տըրկովին, վորպեսզի վող-
ջույն հայտնեմ նրան իր քրոջ կողմից, վոր իմ
գեմիադիական ընկերունին եր։ Գնացի Ց. Յա.
Կոնի մոտ, վորը ինձ ներկայանում եր հին ան-
հաշտ հեղափոխականի պատկով զարդարված, և
նա սաստիկ գուր յեկավ ինձ։

Շուշենսկու գյուղը, ուր ապրում եր Վլադի-
միր Իլյիչը, յեկանք իրիկնաժամին։ Վլադիմիր
Իլյիչը վորսի յեր գնացել։ Իջանք, մեղ տարան
խրճիթ։ Սիրիբում—Մինուսինսկի շրջանում գյու-
ղացիները շատ մաքուր են ապրում. հատակնե-
րին փռված են տանը գործված խայտաբղետ
կարպետներ, պատերը մաքուր սպիտակացված են
և յեղինիներով դարդարված։ Վլադիմիր Իլ-

յիշի սենյակը թեև մեծ չեր, բայց հոռյուս
պես մաքուր եր: Տերերը խրճիթի մնացածը զի-
ջեցին ինձ ու մորս: Տերերն ու նրանց հարկան-
ները լցվեցին խրճիթը և սկսեցին յեռանդով
նայել ու հարցուփողձել մեզ: Վերջապես Վա-
գիմիր հլյիշը վերադարձավ վորսից: Զարմացավ
վոր իր սենյակում լույս կա: Տանտերը ասաց,
վոր դա Ոսկար Ալեքսանդրովիչն ե (Պետերբուրգ-
ցի աքսորյալ բանվոր) վոր հարբած յեկավ ու բո-
լոր գրքերը շաղ տվեց: Իլյիշը արագ վազեց գեպի
մուտքը: Այդ ժամանակ յես խրճիթից դուրս յե-
կա: Այդ դիշեր մենք յերկա՛ր խոսեցինք: Իլյիշը
կազդուրվել եր, և առողջությունն ուղղակի կա-
թում եր նրանից:

Շուշնակում աքսորյալներից կային միայն
յերկու բանվոր—Լոձեցի սոցիալ-դեմոկրատ, գըլ-
խարկ կարող լեհ Պրոմինսկին իր կնոջ և վեց
յերեխաների հետ և Պուտիլովի գործարանի բան-
վոր Ենգբերգը, վոր ազգով Փին եր: Յերկումն
ել լավ ընկերներ եյին: Պրոմինսկին հանդարստ,
հավասարակշռված, բայց շատ պինդ մարդ եր:
Նա քիչ եր կարդում և քիչ բան գիտեր, բայց
ոժտված եր զարմանալի, ցայտուն կերպով շեշ-
տված դասակարգային բնազգով: Ի՞՞ այն ժամանակ
դեռ ևս հավատացյալ կնոջը նա վերաբերվում եր
հանգիստ հեղնանքով, շատ սիրում եր վորսի գնաւ-

տոն որերը հագնում եր տոնական հագուստ-
ներ, և նրա դեմքին յերկում եր մի ինչ-վոր
առանձին փայլուն ժպիտ:

Նա շատ լավ յերգում եր լեհական հեղափո-
խական յերգեր—«Բանվոր մարդ, ճանաչիր քո-
ույժերը», «Մայիսի մեկը» և մի շաբթ ուրիշ
ներ: Յերեխաները ձայնակցում եյին նրան,
յերգեցիկ խմբին միանում եր և Վաղիմիր իլ-
յիշը, վոր սիրով և շատ յերգում եր Սիրիում:
Պրոմինսկին յերգում եր և ոռուսական հեղափո-
խական յերգեր, վոր սովորեցնում եր նրան Վա-
գիմիր իլյիշը: Պրոմինսկին պատրաստվում եր
լեհաստան աշխատանքի գնալու ու սպանեց ան-
թիվ անհամար նապաստակներ, վոր նրանց մոր-
թով մուշտակներ պատրաստի յերեխաների հա-
մար. Բայց այսպիսսելին նրան լեհաստան համնել չհա-
ջողվեց: Բնաւանիքով գնաց-հասավ Կրամնոյարսկին
մոտիկ մի տեղ, ծառայության մտավ յերկաթու-
զու վրա: Յերեխաները մեծացան: Ինքը՝ դար-
ձավ կոմունիստ, կոմունիստ դարձավ և կինը՝
պանի Պրոմինսկայան, կոմունիստ դարձան յերե-
խաները: Մեկը սպանվեց պատերազմում: Մյու-
սը քիչ մնաց ընկներ քաղաքացիական կովի ժա-
մանակ, վորը հիմա Զիտառումն եւ Նախանցյալտարի
միայն Պրոմինսկին ճանապարհ ընկավ լեհաս-
տան գնալու, բայց ճանապարհին մեռավ բծա-
վոր տիֆից:

Մյուս բանվորը բոլորովին այլ տիպի մարդ
 եր: Նա ջահել եր. աքսորվել եր գործադուլին
 մասնակցելու և այդ գործադուլի ժամանակ
 ցույց տված կատաղի արարքի համար: Նա շատ
 եր կարգում և կարգում եր ամեն տեսակի բան,
 բայց ամե՞սաադու համացողություն ուներ սո-
 ցիալիզմի մասին: Մի որ յեկավ վիճակային վար-
 չությունից թե՝ «նոր գրագիր ե յեկել, մենք
 համոզմունքներով միացանք»: «Այսինքն», —
 հարցնում եմ: «Թե նա, թե յես դեմ ենք հե-
 ղափոխության»: Յես ու Վաղիմիր Իլյիչը ուղ-
 ղակի հառաջեցինք: Հետևյալ որը նստեցի նրան
 «Կոմունիստական Մանիքեստ» կարգալու (պետք
 յեղավ թարգմանել գերմաներենից). այդ վեր-
 ջացնելով անցանք «Կապիտալի» ընթերցման:
 Մի անգամ զբաղմունքի ժամանակ ներս մտավ
 Պրոմինսկին, նստեց ու սկսեց ծխամորճը ծծել: Յես
 կարգացածի մասին ինչ-վոր հարց եմ առաջար-
 կում: Ոսկարը չգիտի ինչ ասի, իսկ Պրոմինս-
 կին հանդարտ, ժպտալով պատասխանեց հար-
 ցիս: Մի ամբողջ շարթով Ռոկարը թողեց զբաղ-
 մունքները: Բայց լոնգ տղա յեր: Շուշնսկում
 ել ուրիշ աքսորյալ չկար: Վաղիմիր Իլյիչը պատ-
 մում եր, վոր ինքը փորձել ե ծանոթություն
 հաստատել ուսուցչի հետ, բայց բան չի դուրս յե-
 կել: Ուսուցչը ձգտում եր զեպի տեղական արիս-

տոկրատիան — զեպի տերտերն ու խանութպան-
 ները: Նրանք թուղթ եյին խաղում և խմում:
 Ուսուցչը վոչ մի հետաքրքրություն չեղ ցույց
 տալիս զեպի հասարակական խնդիրները: Այդ
 ուսուցչի հետ շարունակ վիճարանում եր Պրո-
 մինսկու ավագ վորդին՝ Լեոպոլտը, վորն այն
 ժամանակից արդեն համակրում եր սոցիալիստ-
 ներին:

Վաղիմիր Իլյիչը մի ծանոթ գյուղացի ու-
 ներ՝ Ժուրավլյով ազգանունով, վորին նա շատ
 սիրում եր: Թոքախտավոր, յերեսուն տարեկան
 ժուրավլյովը առաջ գրագիր եր յեղած: Վաղի-
 միր Իլյիչը նրա մասին ասում եր, վոր բնավո-
 րությամբ հեղափոխական, բողոքող ե: Ժուրավ-
 լյովը համարձակ դուրս եր գալիս հարուստնե-
 րի դեմ, չեր հաշտում անարդարության հետ:
 Բոլոր ժամանակ ուր-վոր գնում եր, և շուտով
 մեռավ թոքախտից:

Իլյիչի մյուս ծանոթը աղքատ գյուղացի յեր:
 Վաղիմիր Իլյիչը հաճախ նրա հետ վորսի յեր
 գնում: Դա ամենապարզ գյուղացիներից մեկն
 եր. կոչում եյին նրան Սոսիպատիչ. նա շատ
 լավ եր վերաբերվում Վաղիմիր Իլյիչին և նվի-
 րում եր նրան ամեն տեսակի բան — մերթ կոռունկ,
 մերթ յեղենու կոներ:

Սոսիպատիչի, ժուրավլյովի միջոցով Վաղի-

միր հլյիչը ուսումնասիրում եր սիրիբյան զյուղը՝
Մի անգամ նա պատմեց ինձ իր մի զրույցը
ունեվոր գյուղացու հետ, վորի տանը ապրել եր,
Հոտաղը նրանից կաշի յեր գողացել։ Գյուղացին
նրան վրա յեր հասել գետակի մոտ և սպանել։ Այդ
առիթով հլյիչը խոսում եր մանր սեփականա-
տերի անխնա դաժանության և մշակներին ան-
խնայորեն շահագործելու մասին։ Յեվ, իսկապես,
Սիրիրի տնային բատըակները աշխատում եյին
տաժանակիրների նման, հանգիստ եյին առնում
միայն տոներին։

Գյուղը ուսումնասիրելու մի ուրիշ միջոց ել
ուներ հլյիչը։ Կիրակի որերը նրա մոտ իրավա-
բանական կոնսուլտացիա յեր։ Նա, վորպես իրա-
վագետ, մեծ ժողովրդականություն եր վայելում,
վարովինետև հանքերից քշված մի բանվորի ոգնել
եր վուկի արդյունաբերողից զործը տանելու։
Տարված զործի այդ համբավը շուտով տարած-
վեց գյուղացիների շրջանում։ Գալիս եյին գյու-
ղացիներ, գեղջկուհիներ և իրենց ցավերը պատ-
մում։ Վլագիմիր հլյիչը ուշադիր լսում եր, թա-
փանցում ամեն բանի խորքը և հետո խորհուրդ
տալիս։ Մի անգամ մի գյուղացի քսան վերստ
ճանապարհ կտրելով՝ յեկել եր խորհուրդ հար-
ցնելու, թե ինչպես պատժի իր վեսին, վոր-
ցնելու, թե կանչել հարսանիք, ուր լավ քեֆ են
իրեն չի կանչել հարսանիք,

արել։ «Իսկ հիմի վեսեղ կհուրասիրի՝, յեթե
գնաս նրա մոտ»։ «Հա, հիմի կանի»։ Յեվ Վլա-
գիմիր հլյիչը համարյա մի ժամ կրըցրեց, վոր
այդ գյուղացուն համոզի վեսի հետ հաշտվելու։
Յերբեմն միանգամայն անկարելի յեր լինում
պատմություններից հասկանալ թե բանն ին-
չումն ե, ուստի Վլագիմիր հլյիչը միշտ ինդ-
րում եր զործի պատճենը բերել։ Մի անգամ
հարուստ գյուղացիներից մեկի յեղը հարու յեր
տվել մի չքափոր կովի։ Վիճակային դա-
տարանը վճռել եր, վոր յեղատերը տասը ոռոբլի
տա այդ կով։ Կինը բողոքել եր վճռի դեմ և
պահանջել զործի «պատճենը»։ «Ի՞նչ, քեզ սպի-
տակ կովի պատճենը տանք, ի՞նչ ե» ծիծաղել եր
նրա վրա տտենակալը։ Զայրացած կինը յեկալ
Վլագիմիր հլյիչին զանգատվելու։ Հաճախ բա-
վական եր, վոր ուղժողը սպառնա, թե կզան-
գատվի Ուլյանովին, վորպեսզի զրկանք հասցնո-
վը զիջի։

Սիրիրյան գյուղը Վլագիմիր հլյիչը լավ ու-
սումնասիրեց։ առաջ նա գիտեր Վլագայի ափե-
րի գյուղերը։ հլյիչը պատմեց մի անգամ։
«Մայրս ուզում եր, վոր յես գյուղում տնտե-
սությամբ զբաղվեմ։ Յես սկսեցի, բայց տեսնեմ
չի լինում—վերաբերմունքը դեպի գյուղացիները
անհորմալ ե դառնում»։

իսկապես ասած, Վլադիմիր Իլյիչը, վորովես
աքսորյալ, իրավունք չուներ իրավական գուծե-
րով զբաղվելու, բայց այն ժամանակ Մինու-
սինակի ըջանում ազատամիտ ժամանակներ
ելին։ Փաստապես վոչ մի հսկողություն չկար։

«Առենակալը», վոր տեղացի ուներ գյուղա-
ցի յեր, ավելի հոգ եր տանում մեզ հորթի միս
վաճառելու մասին, քան թե այն մասին, վոր
«իր» աքսորականները չփախչեն։ Շուշինսկում
զարմանալի եժանություն եր։ Որինակ, Վլա-
դիմիր Իլյիչը իր «ռոճիկով»—ութ ոռւբլի նպաս-
տով—ուներ մաքուր սենյակ, կերակուր, շո-
րերը լվանում ելին և կարկառում, —և դա դեռ
թանգ եր համարվում։ Ճիշտ ե, ճաշն և ընթրի-
քը հասարակ եր—շաբաթը Վլադիմիր Իլյիչի հա-
մար մորթում ելին մի վոչխար, վորով որեց-որ
կերակում ելին նրան, մինչև բոլորը կուտեր.
հենց վոր ուտում, վերջացնում եր—մի շաբաթ-
վա համար միս ելին գնում. աղախինը դուրսը,
տաշտում, վորի մեջ կեր ելին պատրաստում
տավարի համար, գնված միսը մանրացնում եր,
վորպեսզի Վլադիմիր Իլյիչի համար կատեւ պատ-
րաստեն, ելի մի ամբողջ շաբաթվա համար։
Բայց կաթն ու շանեզը առատ եր թե իրեն՝ Վլա-
դիմիր Իլյիչի և թե նրա շան՝ գեղեցիկ կորտոն-ժեն-
կայի համար, վորին Վլադիմիր Իլյիչը սովորեցրել

եր և կապոց տանել, և յերկու վոտի վըա ուղիղ
կանգնել, և այլ շնային գիտություններ, Վորովին-
տե Զիրյանովների մոտ գյուղացիները հաճախ հար-
բում ելին, և ընտանեկան կյանք վարելն ել այն-
տեղ շատ կողմերով անհարմար եր, մենք շուտով
ուրիշ բնակարան փոխադրվեցինք. դա մի ամբողջ
տան կեմն եր վորը ուներ և բակ, և բանջա-
րանոց։ Վարձեցինք չորս ոռուբլով։ Ապրեցինք
այդտեղ ընտանիքով։ Ամառը անկարելի յեր զըտ-
նել մեկը, վոր ոգներ մեզ տնտեսության մեջ։
Յեվ յես ու մայրս յերկուսով կոփկս ելինք տալիս
ոռուսական փեչի հետ։ Սկզբում պատահում եր, վոր
արգանակը շուռ եյի տալիս ու թափում ունե-
լիքով։ Հետո սովորեցի։ Մեր բանջարանոցում
աճում հասնում եր ամեն ինչ, —վարունգ, զա-
զար, ճակընդեղ, դղում. իմ բանջարանոցով յես
շատ հպարտանում եյի։ Բակը այգի շինեցինք.
գնացինք անտառ բախեղ բերինք և այգին սարքե-
ցինք։ Այժմ Շուշինսկուց, գրում են, վոր այդ
տանը տեղափորված ե Ուկան բջիջ։ Այդին
լցվել ե վայրի խոտով, ցանկապատը քանդվել ե,
շուտով կըանդվիլ և տունը, չոկտեմբերին հայտնվեց
իմ այնտեղի ոգնականուհին, տասներեք տարե-
կան նիհար, սուր արմունկներով Պաշան, վորը
կան նիհար, սուր արմունկներով Պաշան, վորը
եր ձեռքն եր առել արողջ տաեսությունը։ Յես
նրան գրագիտություն սովորեցրի և նա պատե-

ըլ զարդարեց մորս հրահանգներով. «Յերբեք, թեյլ մի թափիր». պահում եր ուղագիր ուր զըրում եր. «Յեղան Ուկար Ալեքսանդրովիչը և Պրոմինսկին. Յերգ յերգեցին. յես ել յերգեցի»:

Հայտնվեցին յերեխաներ. Բակում ապրում եր մի գաղթական լատիշ, հարբեցող մի մարդ. Նա տասչորս յերեխա յեր ունեցել, բայց ապրեց միայն մեկը՝ Մինկան. Մինկան վեց տարեկան եր. գունատ, թափանցիկ դեմք ուներ. Պայծառ աչքեր և լուրջ խոսակցություն. Նա սկսեց ամեն որ գալ մեզ մոտ. դեռ անկողնից չելած, մեկ ել տեսար դուռը բաց անելով՝ հայտնվեց փոքրիկը՝ մի մեծ գղակ զլսին, մոր փափուկ կոփտան հագին, շարֆով փաթաթված, ու ուրախ հայտարարեց. «Յե՞ս յեկա»: Գիտեր, վոր մայրս գժի պես սիրում ե իրեն, վոր Վլագիմիր Իլյիչը միշտ կխաղա և հանաքներ կանի իր հետ. Նրայետեվից վաղում եր մայրը. «Մինկա, մանեթանոց չե՞ս տեսել»:

— «Տեսա. սեղանի վրա ընկած եր, զրի տուփի մեջ»: Յերբ մենք մեկնեցինք, Մինկան վշտից հիվանդացավ: Այժմ նա ել չկա, մեռել ե, իսկ հայրը զրել եր, խնդրելով հող հատկացցել իրեն Յենիսեյի այն կողմը. «ուզում եմ ծեր հասակում կուշտ ապրել»:

Մեր տնտեսությունը քանի գնում ավելանում եր. — ձեռք բերինք կատվի ձագ:

Առավոտից Վլագիմիր Իլյիչի հետ նստում եյինք Վերը թարգմանելու, վոր գտել եր ինձ համար Ստրովին: Ճաշից հետո յերկու ժամ յերկուով միասին արտագրում եյինք «Թաշվիտություն»: Հետո ուրիշ մանր գործեր կային: Պոտրեսովը յերկու շաբաթով ուղարկեց մեզ՝ կառցեկու Բերնշտեյնի գեմ գրած գրքույկը. բոլոր գործերը թողինք մի կողմ և գրքույկը ժամանակին՝ յերկու շաբաթվա մեջ թարգմանեցինք: Աշխատանքից հետո գնում եյինք զրուսանքի: Վլագիմիր Իլյիչը մոլի վորսկան եր. ձեռք եր բերել կաշվե վարտիկ և ինչ ճահիճ ասեք չեր մտնում: Ու ինչքան վորս կար այստեղ: Յերբ գարնանը յեկա, զարմացա: Գալիս ե Պրոմինսկին ե, ուրախ ժպտալով, ասում. «Տեսաք բագերը յեկան»: Գալիս ե Ուկարը և նույնպես բագերի մասին խոսում: Ժամերով խոսում եյին, իսկ հետեւյալ զարնանը յես արդեն ընդունակ յեղա խոսելու, թե վո՞քտեղ, ո՞վ, յե՞րբ բագեր ե տեսել: Զմրան սառնամանիքներից հետո, յերբ զարթնում եր գալունը, յես ինձ զգում եյի նրա իշխանության ներքո: Յերեկո: Վերջալույս: Դաշտում, զարնանը առաջացած մեծ լճակներում լողում են վայրի կարապները: Կամ՝ կանգնած ես անտառի պոնկին, գետակը յեռում ե, փայտփորիկը կտկացնում ե ծառերը: Վլագիմիր Իլյիչը գնում ե

անտառ, խճղբում և ժենկային պահել տանը՝ բոնում
ես, ժենկան զողում ե հուզումից, և զգում ես, թե
բնության բուռն զարթոնքը ինչպես ե տիրում քեզ՝
վլադիմիր իլյիչը մոլի վորապրդ եր, բայց շատ եր
տաքանում։ Աշնանը անցնում ենք հեռու բացատ-
ներով, վլադիմիր իլյիչը ասում է. «Գիտես, յեթե
նապաստակ պատահի չպետք ե կրակեմ, փոկ չեմ
վերցրել զժվար կլինի տանել»։ Նապաստակը դուրս
ե պըճնում, վլադիմիր իլյիչը կրակում է։

Ուշ աշնանը, յերբ Յենիսեյը արդեն մահր սա-
ռույց եր տաճում, գնում ելինք իղզիները նապաս-
տակներ վորսալու, նապաստակներն արդեն սպի-
տակում են։ Կղզուց գնալու ուրիշ տեղ չունեն վոչ-
խարների պես վազում են մեր շուրջը։ Պատահում
եր—միամբողջնավակլցնում ելինսպահնվաճներով։

Ապրելով Մոսկվայում, վլադիմիր իլյիչը վեր-
ջին տարիները յերբեմն նույնպես վորսի եր գնում,
բայց վորսորդական տեսդն զգալի չափով պտկասել
եր։ Մի անգամ գնացին աղվեսի վորսի։ Այս վոր-
սորդության ծրագիրը շատ հետաքրքրեց վլադիմիր
իլյիչին։ «Խորամանկ ե մտածված» ասում եր նա:
Վորսորդները սարքել ելին այնպես, վոր աղվեսը
վորսորդները պարքել ելին այնպես, վոր աղվեսը
հրացանը բռնել եր այն ժամանակ, յերբ աղվեսը
մի լուս կանգնելով ու նրան նայելուց հետո
ալագ թեքվել մտել եր անտառ։ «Ինչու չկրա-

կեցիր»։ — «Գիտես, շատ գեղեցիկ եք»։

Ուշ աշնանը, յերբ զեռ ձյունը չեր յե-
կել, բայց գետերը սառչում ելին արդեն, հո-
սանքով գնում ելինք յերկար—յուրաքանչյուր
քարը, յուրաքանչյուր ձկնիկը յերեսում եր սա-
ռույցի տակ, կարծես ինչ-վոր կախարդական
թագավորություն լիներ։ Իսկ ձմեռը, յերբ մնդի-
կը սառչում ե ջերմաչափերի մեջ և գետերը
սառչում են մինչև հատակը, ջուրը հոսում ե
սառույցի յերեսով և շուտով ինքն ել ծածկվում
սառույցով, կարելի յեր վոտքի տակ ծռվող սա-
ռույցի վրայով յերկու վերստ գնալ։ Այս բոլո-
րը վլադիմիր իլյիչը շատ եր սիրում։

Յերեկոները վլադիմիր իլյիչը սովորաբար կար-
գում եր փիլիսոփայական զրքույկներ—Հեգել,
Կանտ, Փրանսական մատերիալիստներին իսկ յերբ
շատեր, հոգնում — Պուշկին, Լերմոնտով, Նեկրասով։

Յերբ վլադիմիր իլյիչը առաջին անգամ
հայտնվեց Պետերբուրգում, յես նրան ճանաչում
ելի սրա, նրա պատմություններով։ Ստեփան
իվանովիչ Ռադչենկոյից լսել ելի, վոր վլադի-
միր իլյիչը կարգում ե միայն լուրջ զբքեր և
կյանքում վոչ մի վեպ չի կարդացել։ Յես դար-
մացա, հետո, յերբ մոտից ծանոթացանք վլա-
դիմիր իլյիչի հետ, այդ մասին վոչ մի խոսակ-
ցություն չեղավ մեր միջե, և միայն Սիբիրում

իմացա, վոր այդ բոլոր ասածները հեքիաթ են
միտյս: Վլագիմիր իլիչը վոչ միայն կարդացել
եր, այլև շատ անգամ կրկնել Տուրգենևի,
Տոլստոյի գրվածքների ընթերցումը, Զերնիշև-
կու «ԿТО ДЕЛАТЬ»-ը, առհասարակ շատ լուվ գւ-
տեր և սիրում եր կլասիկներին: Հետո, յերբ
բայլշերիկները իշխանության գլուխանցան, նահարց
դրեց՝ Պետհրատին վերահրատարակել կլասիկնե-
րին՝ եժանագին հրատարակությամբ: Վլագիմիր
իլիչի ալբորում, բացի հարազատների և նին տա-
ժանակիրների պատկերներից, կային նաև Զոլայի,
Հերցենի պատկերները և մի քանի պատկեր Զեր-
նիշևկուց¹⁾:

Շաբաթը յերկու անգամ պոստ եր ստացվում:
Բնդաբձակ նամակաղբություն ունեյինք: Նամակ-
ներ ու գրքեր գալիս եյին Ռուսաստանից: Ամեն
ինչի մասին մանրամասն գրում եր Աննա Իլինիչ-
նան. զրում եյին Պետերբուրգից: Գրում եր, ի մե-
ջի այլոց, Նինա Ալեքսանդրովսա Սարուվեն իր վոր-
դու մասին, զոր արդեն յերեխան գլուխը կարողա-
նում ե պահել, զոր ամեն որ մոտեցնում ենք նրան
Դարվինի և Մարքսի պատկերներին և ասում.
գլուխ տուր Դարվին պապին, գլուխ տուր Մարքսին,

¹⁾ Զերնիշևնեն Վլագիմիր Իլիչը առանձնապես սիրում
եր: Զերնիշևնեն պատկերներից մեկի վրա կա Վլագիմիր Իլիչը
ձեռագիրը—ձնվել ե այսինչ թվին, մեռել ե 1889 թվին:

և նա ծիծաղելի կերպով կլուխ ե գալիս: Նա-
մակներ ստացում եյինք հեռու աքսորավայրից—
Տուրուխանսկից՝ Մարտովից, Ուլովից, Վյատկո-
յի նահանգից, Պոտրեսովից: Բայց ավելի շատ
նամակներ ստացվում եյին հարկան գյուղերում
ցրված ընկերներից: Մինուսինսկից (Շոշենսկու
գյուղը գտնվում երնըանից 50 վերստ հեռու) գրում
եյին կրժիժանովսկիները, Ստարկովը, 30 վերստի
վրա Յերմակովսկում ապրում եյին Լեպեշենս-
կին, Վանեեր, Սիլվինը, Պանին՝ Ռոկարի ընկերը.
70 վերստի վրա՝ Տեսում ապրում եյին Լեզնիկը,
Շապովալը, Բարամզին, շաքարի գործարանում
ապրում եր կուրնատովսկին: Գրում եյին ամեն
բանի մասին—ուստական լուրերի մասին, ապա-
գայի ծրագիրների մասին, գրքերի, նոր հոսանք-
ների, փիլիսոփայության մասին: Նամակագրու-
թյուն ունեյին և շահմատի խողի մասին, ա-
ռանձնապես Լեպեշենսկու հետ: Խաղում եյին
նամակով: Վլ. Իլիչը դասավորում եր շահմատը
և կոահում, թե ինչ պիտի լինի հետեանքը: Մի
ժամանակ այնպես եր տարվել, զոր քնի մեջ
անգամ ձչում եր. «յեթե նա ձին դեսը բերի
յես թնդանոթը դենը կտանեմ»:

Թե Վլագիմիր Իլիչը և թե Ալեքսանդր Իլ-
իչը մանկությունից, մեծ յեռանդով շահմատ
եյին խաղում: Խաղում եր և Վլագիմիր Իլիչի

հայրը: «Առաջ հայրս տանում եր մեզ,—պատմում եր Վլադիմիր իլյիչը,—հետո մենք՝ յես և յեղբայրս շահմատի խաղի ձեռնարկ գտանք և սկսեցինք հորս տանել: Մի անգամ—յերեխաներս ապրում եյինք վերև—հանդիպեցի հորս մոմը ձեռին գալիս եր մեր սենյակից՝ շահմատի ձեռնարկը ձեռին: Այսուհետև նա նստեց նորից ուսումնասիրելու շահմատը»:

Ուսասատան վերադառնալով՝ վ. իլյիչը թողեց շահմատի խաղը: «Շահմատը շատ ե գրավում մարդուն ու խանգարում ե աշխատելու»: Յեվ գորովհետեւ վ. իլյիչը վոչինչ չեր կարողանում թերատ անել, այլ նվիրվում իր գործին ամբողջ յեռանդով, ուստի հանգստի ժամանակ և տարագրության մեջ արդեն ակամա եր շահմատի նստում:

Վ. իլյիչը ջահել ժամանակից արդեն կարողանում եր գեն շպրտել այն, ինչ խանգարում ե: «Յերբ գիմնազիստ եյի, տարվեցի չմուշկի խաղով բայց հոգնում եյի. չմուշկից հետո սաստիկ քնել եյի ցանկանում. խանգարում եր աշխատել, թողի՛»:

«Մի ժամանակ,—պատմում եր մի ուրիշ անգամ վ. իլյիչը,—յես սաստիկ տարվեցի լատիներենով»: «Լատիներենով» զարմացա յես. —«Այո՛, բայց տեսա մյուս զբաղմունքներս խան-

գարում ե, թողի՛»: Մոտ որերս միայն «Լեֆ»-ը կարդալով, ուր ուսումնասիրված ե վ. իլյիչի վոճը, լեզվի կազմությունը, ցույց ե տրված վ. իլյիչի նախադասությունների կազմության նմանությունը հոռմեյական հոետորների նախադասությունների կազմության հետ, ինչպես նաև, հոետորական ձեւերի նմանությունը,—յես հասկացա, թե ինչու վ. իլյիչը կարող եր տարվել լատինական գրողների ուսումնասիրությամբ:

Աքսորական ընկերների հետ վոչ միայն նամակագրություն ունեյինք, այլ և յերբեմն, թեև վոչ հաճախ, տեսնվում եյինք:

Մի անգամ գնացինք կուլնատովսկու մոտ: Նա շատ լավ ընկեր եր, շատ կրթված մարքսիստ, բայց ծանր եր դասավորվել նրա կյանքը: Դաժան մանկություն՝ հրեշ հոր մոտ, հետո աքսորաքսորի, բանաբանակի յետեից: Ազատության մեջ գրեթե չեր գործել, մի-յերկու ամսից հետո յերկար տարիներով բանտարկվում եր, չգիտեր կյանքը, չիշղողությանս մեջ մնացել ե մի տեսարան: Գնում ենք այն շաքարի գործարանի մոտով, ուր նա ծառայում եր: Գնում են յերկու աղջիկ—մեկը հասակով, մյուսը փոքր: Մեծը տանում եր մի զատարկ գույլ, փոքրը՝ ձակնդեղ: «Ինչպես չեք ամառում, մեծը ստիպում ե փոքրին բեռ կրելու» ասուց կուլնատովսկին մեծ աղջկան: Աղջիկը տարա-

կուսած նայեց նրան։ Մենք գնացինք Տես Մի անգամ նամակ յեկալ կրժիքանովսկիներից թե «Վոստիկանապետը ինչ-վոր բողոքի պատճառով զայրացել և Տեսի աքսորականների վրա և չի թողնում վոչ մի կողմ գնալու։ Տեսում մի սար կա, յերկրաբանական կողմով հետաքրքրական, գրեցեք, վոր ուղում եք ուսումնասիրել»։ Վլադիմիր Իլյիչը կատակով մի գրություն գրեց վոստիկանապետին, խնդրելով վոչ միայն իրեն թողնել Տես, այլ իրեն ոգնելու համար և կնոջը։ Վոստիկանապետը թույլտվություն ուղարկեց սուրճանդակի միջոցով։ Յերեք սուրբով միաձի սայլակ վարձեցինք և գնացինք Տես։ Զիատեր կինը հավատացնում եր, վոր ձին ուժեղ ե, «բլլիկ» չի և նրան շատ քիչ վարսակ և հարկավոր. և ձին թեև «բլլիկ» չեր, սակայն ճանապարհի կեսին կանգնեց, բայց և այնպես հասանալի Տես։ Վ. Իլյիչը Լենգնիկի հետ խոսեց Կանտի մասին, Բարամզինի հետ՝ կազմանի խըմբակների մասին։ Լենգնիկը, վոր գեղեցիկ ձայն ուներ, յերգեց մեղ համար։ Այդ ճանապարհությունը ընդհանրապես մի ինչ-վոր առանձին լավ հիշողություն թողեց։

Յերկու անգամ գնացինք Յերմակովսկու։ Մի անգամ «կը եգո»-ի առիթով բանաձեռնունելու համար. Վահեներ ծանր հիվանդ եր թոքախտով,

մեռնում եր։ Նրա մահճակալը դուրս եյին բերել մեծ սենյակը։ Բանաձեռն ընդունվեց միաձայն։

Յերկրորդ անգամ այնտեղ գնացինք արդեն Վահեներին թաղելու։

«Դեկաբրիսաներից» (այսպես կատակով կոչում եյին այն ընկերներին, վորոնք ձերբակալվեցին 1895 թ. գեկանմբերին) յերկուսը շուառով շարքերից գուրս յեկան. բանաձեռն խելագարված Զապորոժյեցը և այնտեղ ծանրապես հիվանդացած Վահեներ՝ մեռան, յերբ բանվորական շարժման բոցը նոր միայն սկսում եր բռնկվել։

Նոր տարուն գնացինք Մինուս, ուր հավաքվել եյին բոլոր սոց. գեմ. աքսորականները։

Մինուսում կային և նարոգովովեց աքսորականներ—կոհոր, Տըրկովը և ուրիշները, բայց նըրանք իրենց մեկուսացած եյին պահում։ Ծերերը սոց.-դեմ. յերիտասարդության վերաբերվում եյին անվատահությամբ. չեյին հավատում, վոր դրանք իսկական հեղափոխականներ եյին։ Այս հողի վրա, նախ քան իմ Շուշինսկոյե գալը, Մինուսինսկի գավառում տեղի յեր ունեցել աքսորային պատմություն։ Մինուսում յեղել ե աքսորական սոց.-դեմ. Ռայչին, արտասահմանի գործիչներից, վոր կապված և յեղել «Աշխատանքի Աղատագրության» Խմբակի հետ։ Նա վճռում է

փախչել։ Փող են զտնում փախչելու համար, բայց փախուստի որը նշանակված չի լինում։ Բայց Ռայչինը, փողը ստանալով, ընկնում է այնպիսի ջղային գրության մեջ, վոր չնախազգուշացնելով վորեւ մեկին, փախչում է։ Ծերերը՝ նարոդովոլցիները, մեղադրում եյին սոց.-դեմ., վոր նրանք իմացել են Ռայչինի փախուստի մասին, բայց իրենց, ծերերին չնն նախազգուշացրել. կարող եյին խուզարկություններ լինել, և իրենք մաքուր չեյին զուրս գա: «Պատմությունը» ձնագնդի պես աճում է: Յերբ յես տեղ հասա, Վ. Իլյիչը պատմեց ինձ այդ մասին, «ավելի վատ բան չկա այս աքսորային պատմություններից, — ասում եր նա, — զրանք սարսափելի լլանում են մարդու. ծերերի ջղերը հիվանդ են. չե՛ վոր ինչեր ասեք չեն ապրել նրանք — տաժանակիր աշխատանքն են կրել: Զպետք ե թողնել, վոր այդպիսի պատմությունները կլանեն քեզ — ամբողջ աշխատանքը դեռ առաջներս ե. չպետք ե այդ պատմություններով ջատվել»: Յեվ Վ. Իլյիչը պնդում եր՝ անջատվել ծերերից: Հիշում եմ այն ժողովը, ուր տեղի ունեցավ այդ անջատումը: Անջատվելու վճիռն ընդունված եր վաղուց, պետք եր դա իրականացնել հնարավորին չափ անցավ կերպով: Կտրվում եյին միմիանցից, վորովհեակ պետք եր կտրվել, բայց

կտրվում, անջատվում եյին առանց չարության, ափսոսանքով: Հետո այդպես ել անջատ ապրեցին:

Ընդհանրապես աքսորը վատ չանցավ: Դրանք սովորելու լուրջ տարիներ եյին: Քանի մոտենում եր աքսորը վերջանալու ժամկետը, այնքան ավելի Վ. Իլյիչը մտածում եր առաջիկա աշխատանքների մասին: Մուսաստանից լուրեր սակավ եյին գալիս, այնտեղ աճում ու ամրանում եր եկոնոմիզմը, կուսակցությունն իրապես չկար, տպարան չկար մուսաստանում, Բունդի միջոցով հըրամարակություն զլուխ բերելու փորձը չաջողվեց: Մինչդեռ, սահմանափակվել հանրամատչեմ զրքույկներ զրելով և չարտահայտվել աշխատանքները վարելու հիմնական հարցերի շուրջը այլև անկարելի եր: Աշխատանքի մեջ մեծ խառնափնյություն կար, մշտական ձերբակալությունները անկարելի եյին դարձնում ամեն տեսակ հաջորդականություն, մարդիկ հասան մինչև «կրեպոն», մինչև «Պարօայ Մայսլի»-ի գաղափարը, վորը տպեց եկոնոմիսաների կողմից պրոպագանիզմից ենթարկված մի բանվորի զրություն, թե՝ դայի յենթարկված մի բանվորի զրություն, թե՝ «մեզ, բանվորներիս, հարկավոր չե վոչ մի Մարքսու ենգելս»...

Լ. Տալստոյը ինչ վոր մի տեղ գրում է, թե ճանապարհիառաջին կեսն անցնողը սովորաբար մտա-

ծում ե այն մասին, թե ինչ ե թողել, իսկ յերկ-
րորդ կիսում մտածում ե այն մասին, թե ինչ ե
սպասում իրեն առաջիկայում։ Այդպես ել աքսո-
րավայրում։ Առաջ ավելի անցյալի ամփոփում-
ներ ես անում, յերկըրդ կիսին ավելի մտածում
ես այն մասին, թե ինչ կա առաջիդ։ Վ. Իլյչը
քանի գնում համառորեն մտածում եր, թե ինչ
պետք ե անել, վորպեսզի կուսակցությունը դուրս
գա այն գլուխյունից, վորի մեջ ընկել եր, ինչ
ովետք ե անել, վորպեսզի աշխատանքը հարկ յե-
ղած հունով ընթանա, վորպեսզի ապահովի նրա
կանոնավոր սոցիալ-գեմոկրատական ղեկավարու-
թյունը։ Ի՞նչից սկսել։ Աքսորանքի վերջին տա-
րում Վ. Իլյչը հղացավ կազմակերպչական այն
ծրագիրը, վոր հետո զարգացրեց «Искра»-ում,
«Что делать» գրքույկում և «Письмо к товаг-
рищу»-ի մեջ։ Պետք ե սկսել համառուսական
լրագրի կազմակերպումից, դա պետք ե հիմնել ար-
տասահմանում և վորքանկարելի ե այն սերտ կապել
ուսուական աշխատանքի հետ, ուսուական կազմա-
կերպությունների հետ, ու վորքան կտրելի ե կար-
գավորել նրա փոխազդությունը։ Վ. Իլյչը դադա-
րեց քննելուց, սարսափելի նիհարեց։ Անքուն գիշեր-
ները կշռադատում եր իր ծրագիրը բոլոր մանրա-
մանություններով, քննում եր այն կրծիժանովա-
կու հետ, ինձ հետ, զրա մասին զրեց Մարտովին և

Պոտքեսովին, պայմանավորվեց նըանց հետ ար-
տասահման գնալու մասին։ Քանի գնում վ. Իլ-
յիչը այնքան անհամբեր եր դառնում, այն-
քան ավելի ձգտում եր աշխատանքի։ Մեկ
ել ահա յեկան խուզարկության։ Ում-վոր մեկի
մոտ գտել եյին վ. Իլյիչին ուղարկված նա-
մակի ստացականը։ Նամակում խոսք կար ֆե-
դոսեկի արձանի մասին։ Ժանդարմները դա առիթ
բռնեցին, վորպեսզի խուզարկություն կատարեն։
Նամակը գտան, բայց շատ անմեղ բան յերևաց,
նայեցին մյուս նամակները, նույնպես հետա-
քրքրական վոչինչ չգտան։ Պետերբուրգի հին
սովորությամբ անկեզալ բաները և անկե-
զալ նամակները, մենք պահում եյինք առան-
ձին։ Իսկապես, զբանք դրված եյին պահարանի
ամենաստորին դարձակում։ Վ. Իլյիչը ժանդարմ-
ներին աթոռ տվեց, վոր նըանք խուզարկու-
թյունն սկսեն վերի դարձակներից, ուր շարված
եյին զանազան վիճակագործական ժողովածուներ,
և նըանք այնպես հալից ընկան, վոր ներքին դա-
րձակը չնայեցին ել, բավականացան իմ հայտա-
րարությամբ, վոր այնտեղ միայն իմ մանկավար-
ժական գրադարանն եւ Խուզարկությունը բարե-
հաջող անցավ, բայց յերկյուղ կար թե հանկարծ
չոգտվեն հանգամանքից և մի քանի տարով ել
չափելացնեն աքսորը։ Փախուստներն այն ժա-

մանակ այնքան ել սովորական չելին, ինչպես
հետո, համենայն դեպս դա կը բարդացներ գոր-
ծը։ Չե՛ վոր նախ քան արտաստանման գնալը,
պետք ե կազմակերպչական մեծ աշխատանք
տանել Ռուսաստանում։ Բանը, սակայն, հաջող
անցավ. աքսորի ժամանակամիջոցը չափելացը ին։

1900 թ. մարտին, յերբ Վ. Իլյիչի աքսորի
ժամանակը լրացավ, մենք շարժվեցինք գեղի
Ռուսաստան։ Գիշերները Պաշան, վոր յերկու
տարվա մեջ դարձել եր իսկական գեղեցկուհի,
գետի պես արցունք եր թափում, Մինկան ան-
հանգիստ եր դարձել, տանում եր իրենց տուն
մնացած թղթերը, մատիաները, նկարները և
այլն, գալիս եր Ռուսար Ալեքսանդրովիչը, նըս-
տում եր աթոռի ծայրին, ըստ յերեսոյթին, հուգ-
վում եր. ինձ նվեր բերեց իր ձեռով շինած
մի քորոց, վոր գրքի ձեւ ուներ և վրան մակա-
գրված եր «Կարլ Մարքս», ի հիշատակ իմ
զբաղմունքների, վոր ունենում եյի նրա հետ
«Կապիտալ» կարդալով. դրանց հետ միասին
գալիս եր մեզ նայելու տանտիբուժին կամ հա-
րեանուհին, տարակուսում եր և մեր շունը, թե
այս բոլոր իրարանցումը ի՞նչ ե նշանակում, և
ամեն բոպե քթով բացում եր բոլոր դռները
վոր հավաստիսնա, թե ամեն ինչ տեղն ե ար-
դյոք. մայրս հազում եր իրերը դասավորելով

հմտությամբ կազկպում եր Վ. Իլյիչի գրքերը։
Հասանք Մինուս, ուր մեզ հետ պիտի առ-
նելինք Ստարկովին և Ոլգա Ալեքսանդրովնա Սիլ-
վինին։ Այստեղ հավաքվել եր արդեն մեր ամբողջ
աքսորական հասաւակությունը. տիրում եր այն
տրամադրությունը, վոր լինում ե սովորաբար,
յերբ աքսորականներից մեկը մեկնում ե Ռու-
սաստան։ յուրաքանչյուրը մտածում եր յերբ և
ուր պետք ե գնա ինքը, ինչպես պիտի աշխա-
տի։ Վ. Իլյիչը գեռ առաջուց խոսել եր, թե միասնա-
բար պիտի աշխատեն այն բոլորի հետ, ովքեր շու-
տով նույնպես մեկնելու յեն Ռուսաստան, խոսեց
մնացողների հետ ունենալիք նամակազրության
մասին։ Բոլորը մտածում եյին Ռուսաստանի
մասին, բայց խոսում եյին այնպես, ամեն տե-
սակ դատարկ բաների մասին։

Բարամդինը հաց ու պանրով կերակրում եր ֆեն-
կային, վորը և մեաց նրան ժառանգություն, բայց
շունը ուշադրություն չեր դարձնումնը վրա. մայ-
րիկի վոաների մոտ պառկած աչք չեր հեռացնում
նրանից, հետեւելովնը յուրաքանչյուր շարժումին։

Վերջապես, թաղիքի վոսնամաններ, քուրք
և այլն հագնելով՝ ձա՞ տպարհ ընկանք։ Զիով գի-
շեր ու ցերեկ Յենիսեյով, գնացինք 300 վերսա,
լավ ե, վոր լուսինը պայծառ լուսավորում եր։
Վ. Իլյիչը հոգածությամբ յուրաքանչյուր կայա-

ըանում փաթաթում. ծածկում եր ինձ ու մորս,
նայում եր թե մենք վոչինչ չենք մոռացել ար-
դյոք, կատակում եր սառած Ռլգա Ալեքսանդ-
րովսայի հետ։ Սրբնթաց արշավում եյինք. Վ.
Իլյիչը գնում եր առանց քուրքի, և հավատա-
ցնում եր, վոր քուրքով շոգում ե, ձեռները խը-
րել եր մայրիկիս մուֆտի մեջ ու մտքով տար-
վել եր Ռուսաստան ուր կարելի յեր աշխատել,
վորքան ցանկանաս։

Ուֆա հասնելու որը մեզ մոտ յեկան
տեղում յեղած աքսուականները — Ա. Դ. Ցյու-
րուպան, Սվիդերսկին, Կրոսմալը։ «Վեց հյու-
րանոց անցանք — կակազելով ասաց Կրոսմա-
լը — վերջապես ձեզ գտանք»։

Վ. Իլյիչը յերկու որ մնաց Ուֆայում և, տե-
ղում յեղութների հետ խոսելով և ինձ ու մայրի-
կիս ել ընկերներին հանձնելով՝ գնաց առաջ,
Պետերբուրգին ավելի մոտ լինելու։ Այդ յերկու
որից իմ հիշողության մեջ մնացել եւ այն այցե-
լությունը, վոր տվինք ծեր նարողովովեց Զետ-
վերգովային, վորին Վ. Իլյիչը ճանաչում եր
կազմից։ Ուֆայում այդ կինը գրախանութ ու-
ներ։

Առաջին իսկ որը Վ. Իլյիչը գնաց նրա մոտ
և մի առանձին մեղմություն կար Վ. Իլյիչի ձայ-
նի մեջ ու դեմքի վրա, յերբ խոսում եր նրա

հետ։ Յերբ հետո կարդացի այն, ինչ Վ. Իլյիչը
զրել եւ բանտում «Կո ծելատ» ի շուրջը, յետ
հիշեցի այս այցելությունը։ «Շատերը նրանցից
(խոսքը բանվորական շարժման սոց-դեմ. յերի-
տասարդ դեկավարների մասին ե), զրում ե Վ. Իլ-
յիչը «Կո ծելատ»-ում, — սկսեցին հեղափոխու-
թեն մտածել, ինչպես նարողովովցիները։ Վաղ
պատանեկության հասակում զրեթե բոլորը խո-
նարհվում եյին տեսորի հերոսների առջև։ Այդ
հերոսական տրագիցիաների հմայիչ տպավորու-
թյունից հրաժարվելը պայքար արժեցավ, վորի
ժամանակ կապեր խղվեցին այն մարդկանց հետ,
վորոնք ամեն կերպ ուղում եյին հավատարիմ
մեալ նարողնայա վոլյային և վորոնց յեր իտա
սարդ սոցիալ-դեմոկրատները մեծապես հարգում
եյին։ Այս պարբերությունը Վ. Իլյիչի կենսա-
գրության մի մամն ե։

Շատ դժվար եր հրաժեշտ տալ, յերբ նոր
միայն սկսվում եր «իսկական» աշխատանքը,
բայց մտածել անգամ չեր կարելի թե Վ. Իլյիչը
կմնա Ուֆայում, յերբ հնարավորություն կար
Պետրովյան մոտենալու։

Վ. Իլյիչը տեղափորվեց Պակովում, ուր աղ-
բեց հետո Պոտրեսովը և Լ. Ռադչենկոն իր յերե-
խաների հետ։ Մի անգամ Վ. Իլյիչը ծիծաղելով
պատմեց, թե ինչպես Ռադչենկոյի աղջիկները՝

ԺԵՆՅՈՒՐԿԱՆ և ԼՅՈՒՂԱՆ, ծաղըել են իրեն և Պոտրեսովին։ ԶԵՌՆԵՐԸ մԵՋՔՆԵՐԻՆ դրած նրանք կողք-կողքի շրջում եյին սենյակում, մեկը ասում եր «ԲԵՐՆՀՄԵՐՆ», մյուսը՝ պատասխանում եր «Կառւցկի»...

Այստեղ, Պակովում նստած, վ. Իլյիչը հյուսում եր կազմակերպության թերերը, վորոնք պետք ե սերտորեն կապելին ապագա արտասահմանյան համառուսական լրագիրը Ռուսաստանի և սուսական աշխատանքի հետ։ Տեսնվել եր Բարուշկինի և մի շարք ուրիշ անձանց հետ

ՅԵՍ կամաց-կամաց ողբնտելացա Ուֆայում թարգմանություններ վերցրի, դասեր գտա։

Իմ Ուֆա գալուց քիչ առաջ այստեղ տեղի եր ունեցել աքսորային պատմություն, և սոցգեմոկրատները բաժանվել եյին յերկու բանակի։ Մի բանակի մեջ եյին կրոխմալը, Ցյուրուպան, Սվիտերսկին, մյուսում՝ Պլակաին յեղբայրները Սալտիկովը, Կվյատկովսկին։ Չաշինան և Ապտեկ մանը լիմբավորումներից գուրս եյին և հարաբերություն եյին պահպանում յերկու խմբերի հետոն ել իսձ ավելի մոտ եր առաջին խմբակը, վորին և մոտեցա շուտով։ Այդ խմբակը վորոշ աշխատանք եր առանում, ընդհանրապես դա ամենաակտիվ մասն եր աքսորականների, Կապեր կային յերկաթօռ դային արհեստանոցների հետ։ Այստեղ կար սոց-

ղեմ. բանվորների խմբակ՝ 12 հոգուց բաղկացած։ Ամենաակտիվը՝ բանվոր Յակուտովն եր։ Շատ անգամ եր գալիս ինձ մոտ զրքեր վերցնելու և խոսելու։ Յերկար ժամանակ ցանկանում եր ձեռք բերել Մարքովի «պոլվերիզացիան», բայց ձեռք բերելով վոչ մի կերպ չեր կարողանում կարդալ։ «Ժամանակ չկա, գանգատվում եր նա. — միշտ, գիտեք, գյուղացիները իրենց գործերով գալիս են ինձ մոտ։ Ամեն մեկի հետ պետք ե խոսել, վոր վատ բան չմտածի քո մասին, ու ել ժամանակ չի լինում։» Նա պատմում եր վոր իր կինը՝ Նատաշան, նույնպես համակրում ե իր գաղափարին, և իրեն համար վոչ մի աքսոր սաբսափելի չե, ինքը վոչ մի տեղ չի կորչի, ձեռները ամեն տեղ կկերակրեն իրեն։ Նա մեծ դավադիր եր, գաղտնի աշխատող, ամեն բանից ավելի ատում եր աղմուկը, պարծենկոտությունը և մեծ-մեծ խոսքերը։ Պետք ե ամեն ինչ անել հիմնավորապես, առանց աղմուկի, բայց հաստատորեն։

Հինգ թվին Յակուտովը դարձավ Ուֆայում կաղմակերպված հանրապետության նախագահը, իսկ հետո, ուսակցիայի որերին, նրան կախեցին Ուֆայի բանատում։ Նա մեռնում եր բանտի բակում, և ամբողջ բանաը յերգում եր—յերգում եյին բոլոր խցերում—և յերգվում, վոր նրա մահը չի մոռանա և չի ների։

Յես պարապում եյի և մի ուրիշ բանվորի հետ,
փոքրիկ գործարանի ջանել մետաղագործ եր դա,
փոր պատմում եր ինձ տեղական բանվորների
կյանքի մասին. շատ տաքարյուն և ջղային տղա
եր. Հետո ինձ ասացին, վոր նա անցել ե ես-Եր՝
ների կողմը և խելագարվել ե բանտում:

Եինում եր ինձ մոտ թոքախտավոր կազմա-
րար կրիլովը, վոր խնամքով կրկնակի կազմ եր
շինում, վորոնց մեջ կարելի եր դնել անլեզալ
ձեռագրեր, և ձեռագիրներից կարտոն եր շինում
կազմերի համար. Նա պատմում եր տեղական
տպագրիչների աշխատանքի մասին:

Այս պատմվածների հիման վրա յել՝ հետո կազմ-
վում եյին թղթակցություններ «Աչքրա»-ի համար:

Ուֆայից բացի, աշխատանք տարվում եր և գոր-
ծարաններում: Ուստի կատավսկի գործարանում
կար սոցիալ-դեմոկրատ ֆելզշերունի, վորը այնտեղ
ըանվորների մեջ աշխատանք եր տանում, տարա-
ծում եր անլեզալ հանրամատչելի գրականությունը
վորի պակասը զգացվում եր մեզ մոտ:

Գործարաններում կային և մի քանի սոց-
դեմ. ուսանողներ: Ուֆայի մեր կազմակերպու-
թյունը Յեկատերինբուրգում պահում եր մի
անլեզալ մարդ—բանվոր Մազանովին, վոր վե-
րադարձել եր աքսորից՝ Տուրխանսկից, ու
նա աքսորված եր Մարտովի հետ: Միայ-

կարծես նրա աշխատանքը չեր աջողվում:

Ուֆան նահանգի համար կենտրոն եր—Ստեր-
լիտամակի, Բիլուկի և այլ գավառական քաղաք-
ների աքսորականները միշտ աշխատում եյին
թույլտվություն ստանալ՝ Ուֆա գալու:

Բացի այդ՝ Ուֆան ընկած եր Սիբիրից Ռու-
սաստան տանող ճանապարհի վրա: Աքսորից վւ-
խադարձող ընկերները կանգ եյին առնում աշ-
խատանքի մասին պայմանավորվելու: Յեկավ
Մարտովը (նրան մի անգամ ից չեր աջողվել
Տուրխանսկից դուրս գալ), յեկավ Գլ. Իվ. Ոկու-
լովան, Պանինը: Աստրախանից անլեզալ յե-
կավ Լ. Մ. Կոխառվիչը—«Քեռին», Սամարայից
գալիս եյին Ռումյանցեր, Պորտոգալովը:

Մարտովը ընակություն հաստատեց Պալտա-
վում: Նրա հետ կապ կար. հույս ունեյին նրա
միջոցով զրականություն ստանալ: Գրականու-
թյունը յեկավ, կարծեմ, իմ Ուֆայից դուրս գա-
լուց մի շաբաթ հետո. Կվատովսկին, վոր գնացել
եր ստանալու—ճանապարհին ջարդված այդ արկ-
ղի պատճառով 5 տարով Սիբիր քշվեց: Նա իսկա-
պես աշխատանք չեր տանում, ծանրոցն ստա-
նալը հանձն առավ նրա համար միայն, վորով-
հետև դա հասցեազրված եր՝ գարեջրի այն գործա-
րանը, վորի տիրոջ աղջկան նա դաս եր տալիս:
Ուֆայում կային և նարողովոցիներ—Լիո-
նովիչ, իսկ ավելի ուշ Բորոդիչ:

Արտասահման գնալուց առաջ վլաղիմիր իլ-
յիշը քիչ մնաց թակարդն ընկներ: Նա Պակովից
Պետերբուրգ ե գալիս Մարտովի հետ միաժա-
մանակ: Նրանց հետևում են և ձերբակալում:
Նրա ժիշտի գրպանում յերկու հազար ռուբլի կար,
վոր ստացել եր «Հորաքույրից» և արտասահ-
մանի հետ յեղած կապերի ցուցակը՝ քիմիայով
նամակի թղթի վրա գրած, վորի յերեսին ձեփ
համար թանաքով գրված եր ինչ-վոր անմեղ
բաներ—ինչ-վոր հաշիվ: Յեթե ժանդարմները
վլսի ընկնեյին և թուղթը տաքացնեյին, այն
ժամանակ Վլաղիմիր իլյիշն ել չեր կարող արտա-
սահմանում համառուսական թերթ հրատարակել:
Բայց նրա «բախտը բանեց» և տաս որից հետո
բաց թողին նրան:

Ապա նա յեկավ ինձ մոտ՝ Ուֆա, հրաժեշտ
տալու: Պատմում եր, թե ինչ ե աջողվել
իրեն անել այդ ժամանակի ընթացքում, պատ-
մում եր այն մարդկանց մասին, վորոնց հան-
դիպել ե: Ինարկե, Վլ. Իլյիշի գալու առիթով
յեղան մի շաբք ժողովսեր: Հիշում եմ, յերբ
պարզվեց, վոր կեռովիչը, իրեն նարողովովեց
համարելով՝ չեխտեր մինչև անգամ «Աշխատան-
դիմիր իլյիշը տաքացավ. «Մի՞թե հեղափոխա-
կանը կարող ե չիմանալ այդ, միթե նա կարող

ե գիտակցաբար ընտրել մի կուսակցություն,
վորի հետ պետք ե աշխատի, յեթե չգիտի, չի
ուսումնասիրել այն, ինչ ե գըել «Աշխատանքի
Ազատագրության» Խմբակը:

Կարծեմ, Վլաղիմիր իլյիշը այդ ժամանակ
մի շաբթի չափ մնաց Ուֆայում:

Արտասահմանից նա ինձ բան գրում եր առա-
վելապես գրքույկների մեջ, վոր ուղարկում եր
զեմստվոյին զանազան գործիչների հասցեով:
Ընդհանրապես, լրագրի գործն ել առաջ չեր
գնում այնպես արագ, ինչպես ցանկանում եր
Վլաղիմիր իլյիշը. դժվար եր Պլեխանովի հետ
համաձայնության գալ, և Վլ. իլյիշի արտասահ-
մանից գրած նամակները կարճ ելին, անուրախ,
վերջանում ելին «կապատմեմ, յերբ գաս», «Պլե-
խանովի հետ ունեցած միջազեպի մասին ման-
րաժան գրել եմ քեզ համար»:

Հաղիվ աքսորիս վերջը յեկավ, բայց հիմա ել
Վլաղիմիր իլյիշից յերկար ժամանակ նամակ չեր-
ստացվում:

Ուզում ելի գնալ Աստրախան, «քեռուած մոտ,
բայց շտապում ելի:

Մորս հետ գնացինք Մոսկվա՝ Մարիս Ալեք-
սանդրովսայի—Վլ. իլյիշի մոր մոտ: Այդ ժա-
մանակ նա մենակ եր Մոսկվայում—Մարիս
իլյինիչնան բանուում նստած եր, Աննա իլյինիչ-
նան արտասահման եր:

Մարիա Ալեքսանդրովսային յես շատ սիրեցի. նա այնպես նըրբազգաց և ուշադիր եր միշտ: Հետո, յերբ մենք ապրում եյինք արտասահմանում՝ նա նամակներ գրում եր յերկուսիս միամին և յերբեք Վլադիմիր Իլյիչին առանձին:

Սա փոքրիկ բան ե, բայց վորքան նըբագ-
գացությունն կա այս փոքրիկ բանի մեջ։ Վլ. Իլ-
յիչը ասատիկ սիրում եր մորը։ «Նա կամքի
հակայական ույժ ունի, — ասաց Վլ. Իլյիչը մի
անգամ, — յեթե յեղբորս հետ այդ բանը հորս կեն-
դանության որով պառահեր, զգիտեմ ինչ կլիներ»։

իր կամքի ույժը վլ. իլյիչը ժառանգել եր մորից. ժառանգել եր նմանապիս նրա նրբաղ գացությունը և դեպի մարդիկ ունեցած ուշադիրությունը:

Յերբ արտասահմանում եյինք, յես աշխատում եյի վորքան կարելի յե կենդանի նկարագրել մեր կյանքը, վորպեսզի նա մի քիչ գոնեմոտաիկ զգա վորդուն: Յերբ 1897թ. Վլ. Իլյիչը աքսորված եր, լրագիրներում հայտարարություն ե լինում Մոսկվայում մեռած Մարիա Ալեքսանդրովսա Ռևյանովի մահվան մասին: Ոսկարը պատճում եր. «Յեկա Վլ. Իլյիչի մոտ, նա կտավի պես գունատ ասաց—մայրս մեռել ե»: Բայց պարզվեց, վոր հայտարարությունը ուրիշ Մ. Ա. Ռևյանովայի մահվան մասին եր:

Շատ վիշտ եր վիճակվել Մարիա Ալեքսանդ-
րովնային—ավագ վորդու մահապատիժը, Ոլգա
աղջկա մահը և մյուս զավակների անվերջ ձեր-
բակալյությունը:

Վ. Ի. Ալիքսը հիվանդանում է 1895 թվին,
նա իսկոյն գալիս խնամում է նրան. ինքը կե-
րակուը և պատրաստում նրա համար. ձերբա-
կալում են Վ. Ի. Ալիքին—նա ելի իր զիրքի վրա
յե, ժամերով նստում է Նախնական Բանտար-
կության Տան կիսախավար Ընդունաբանում,
գնում է տեսակցության, կատարում է հանձ-
նարարություններ, և միայն նրա գլուխն է թե-
թեակի շարժվում:

Յես խոստացա սրան պահպանել Վլադիմիր
իլիչին, բայց չպահպանեցի...

Յեւ Մոսկվայից մորս տարա Պետերբուրգ,
տեղավորեցի նրան այնտեղ, իսկ ինըս գնացի
արտասահման։ Ծիծաղաշարժ ճամբարություն
յեղավ։ Գնացի Պրագա, կարծելով թե վէ. Իլիչը
ապրում ե Պրագայում՝ Մողրաչեկ աղքանունով։

Հեռագիր տվի: Հասա Պրագա—Վոչ-Վոք ՀՅ
Կիմավորում: Սպասեցի, սպասեցի, վերջը մեծ
շփոթության մեջ, կառք վարձեցի, իրերս տե-
ղավորեցի և գնացի: Գալիս ենք բանվորական
թաղը, նեղ փողոց եր, հսկայական տուն, վորի
լուսամաներում յերկում են բազմաթիվ վետու-

բե դոշակներ, վոր շարված են հովին տալու
համար...

Վազում եմ չորրորդ հարկը: Դուռը բացում
ե մի սպիտակ չեխուհի: Յես կրկնում եմ.—
«Մողբաչեկ, հեր Մողբաչեկ»: Գալիս ե մի բան՝
վոր և ասում. «Մողբաչեկը—յես եմ»: Շշմած
կմկնում եմ. «Զե, զա իմ ամուսինն ե»:

Մողբաչեկը, վերջապես, գլխի յե ընկնում:
«Ախ, գուք յերկի հեր Ռիտմեյերի կինն եք. նա
ապրում ե Մյունխենում, բայց իմ միջոցով եր
ձեզ գրքեր ու նամակներ ուղարկում Ռւֆա»:
Մողբաչեկը ամբողջ որը քարշ յեկավ ինձ հետ.
յես նրան պատմեցի ուստական շարժման մա-
սին, նա ինձ՝ ավստրիական. կինը ինձ ցույց
տվեց իր ձեռագործները և կերակրեց ինչ-վոր
խմորագնդերով:

Հանելով Մյունխեն—յես տաք մուշտակով
եյի, իսկ Մյունխենում այդ ժամանակ բոլորը
արդեն սովորական շորերով եյին—փորձով
խրատված՝ կողովները կայարանում պահ տվի,
ելեքտրաքարշով գնացի Ռիտմեյերին գնտուելու:
Տունը գտա. № 1 բնակարանը դուրս յեկավ գա-
րեջրատուն: Մոտեցա վաճառասեղանին, վորի
մոտ կանգնած եր մի հասալիկ գերմանացի, և
ամաչուա հարցրի պարոն Ռիտմեյերին, նախա-
դաշլով, վոր ելի այն չե: Գարեջրավաճառը պա-

տասխանեց. «Դա—յես եմ»: Միանգամայն հու-
սահատված՝ թոթովեցի.—«Վո՞չ, զա իմ ամու-
սինն ե»:

Ու հիմարի պես կանգնել ենք իրար դեմ:
վերջապես, գալիս ե Ռիտմեյերի կինը և, նա-
յելով ինձ գլխի յե ընկնում. «Ախ, սա յերկի
հեր Մեյերի կինն ե. նա կնոջն սպասում է Սի-
բիրից: Յես կուզեկցեմ»:

Ֆրառն Ռիտմեյերի հետեւց գնում եմ ինչ
վոր մեծ տան յետին բակը, ինչ-վոր անբնակ
բնակարան: Դուռը բացում ե, սեղանի մոտ
նստած են վարդիմիր իլյիչը, Մարտովը և Աննա
իլյինիչնան: Ֆրառն Ռիտմեյերին շնորհակալու-
թյուն հայտնելը մոռանալով՝ սկսեցի հայհոյել.
«Թո՛ւ, սատանա, ինչու չեյիր գրում, թե քեզ
վորտեղ կարելի յե գտնել»:

«Ի՞նչպես չեմ գըել: Յես որը յերեք անգամ
գալիս եմ քեզ գիմավորելու: Վորտեղից»: Հետո
պարզվեց, վոր այն զեմստվոյին գործիչը, վորի
անունով ուղարկված ե յեղել հասցեակիր գրքույ-
կը, յուրացըել ե այդ գրքույկը:

Քիչ ոուսներ չեն այնուհետեւ այս ձեռվ ձու-
նապարհողել: Շլյաղնիկովը առաջին անգամ
ժընեի փոխարեն գնացել ե Զենովա, Բարուշ-
կինը կոնդոնի փոխարեն քիչ ե մնացել ընկնի
Ամերիկա:

IV

1901—1902

Թեև Վլադիմիր Իլյիչը, Մարտովը և Պոտրեսովը արտասահման եյին մեկնել լեզալ անձաւգրերով, բայց Մյունիսենում վորոշել եյին առարել ուրիշի անձագրերով ուստ զաղութից հեռու, վորպեսզի Ռուսաստանից յեկած աշխատողներին վորձանքի մեջ չգցեն և հեշտ լինի անլեզալ գրալանություն ուղարկել Ռուսաստան՝ ճամպրուկներով, նամակներով և այլն:

Յերբ յես յեկա Մյունիսեն, Վլադիմիր Իլյիչը առանց արձանագրվելու ապրում եր այդ Ռիտմեյերի մոտ և կոչվում եր Մեյեր: Ռիտմեյերը թեև գարեջրատուն պահող եր, բայց սոցիալ-գեուկրատ եր, և վ. Իլյիչին թագցնում եր իր բնակարանում: Վ. Իլյիչի սենյակը վատն եր, ապրում եր ամուրիի պես, ճաշում եր ինչ վոր գերմանուհու մոտ, վորը նրան կերակրում եր Mehlspiese-ով¹⁾: Առավոտ և յերեկո թեյ եր խմում թիթեղյա ահանով, վորը ինքը խնամքով վառում և կախում եր մեխից՝ ջրի ծորակի մոտ:

Տեսքը մտահոգ եր. ամեն ինչ չեր աջողվում այնպես արագ, ինչպես ցանկանում եր: Այդ ժամանակ Մյունիսենում, վ. Իլյիչից բացի ապ-

¹⁾ Mehlspiese—ալյուրով կերակրու.

րում եյին Մարտովը, Պոտրեսովը և Զասուլիչը:
Պլեխանովը և Աքսելբողը ցանկանում եյին, վոր թերթը լույս տեսնի Շվեյցարիայում մի վորե ետեղ, իրենց անմիջական ղեկավարությամբ: Նը-րանք, առաջին շըջանում և Զասուլիչը, տանձին նշանակություն չեյին տալիս «Ասկրա» ին, միանգամայն թերագնահատում եյին այն կաղմիանգամայն թերը, վոր կարող եր նա ունեմակերպչական գերը, «Յարյա»-ն:

«Հիմար ե ձեր «Ասկրա»-ն» ասում եր սկըզ-բում Վերա Խվանովսան կատակով: Դա, ինարկե, բում Վերա Խվանովսան կատակով: Դա, ինարկե, ձեռնարկության վորոշ թերագնահատանք: Վ. Իլյիչը մտածում էր, թե պետք ե, «Ասկրա»-ն հեռու լինի եմիզը անտական կենտրոնից, վորպեսզի նա վարագանական գերազանց հետ հարաբերություն, նաև Ռուսաստանի հետ հարաբերություն, նաև մակագրություն ունենալու և յեկողների համար: Ծերերը տրամադրել եյին դրա մեջ նկատել, վոր Վ. Իլյիչը չի ցանկանում թերթը փոխադրել Վ. Իլյիչը չի ցանկանում իրենց ղեկավարությունը, այլ ցանկություն ունի տանել իր գիծը, և չեյին շատապում առանձնապես ոգնելու:

Վ. Իլյիչն այդ գումար եր և ջղայնանում: «Աշ-

մամբ նա բոլորովին այլ զգացումներ ուներ: Ել
չասեմ արդեն Պլեխանովի մասին, նա սիրով եր
վերաբերվում և Աքսելրոդին և Զասուլիչին: «Այ-
ժը դու կտեսնես Վերա Իվանովսային, —ասաց
Վլադիմիր Իլյիչը Մյունխեն հասնելուս առաջին յե-
րեկոյան, —դա բյուրեղի պես մարդ ե»: Այո, դա
ճիշտ եր:

«Աշխատանքի Ազատագրության» Խմբակից
միայն Վերա Իվանովսան մոտեցավ «Ասկրա»ին:
Նա ապրում եր մեղ հետ միասին թե Մյունխե-
նում թե Լոնդոնում, ապրում եր «Ասկրա»ի
խմբագրության կյանքով, նրա ուրախություն-
ներով, վշտերով, ապրում եր Ռուսաստանից յե-
կած լուրերով:

«Ասկրա»ն պատկառելի եղանում» կատա-
կում եր նա, տեսնելով ինչպես աճում և զար-
դանում ե «Ասկրա»ի ազդեցությունը: Վերա
Իվանովսան շատ անգամ եր պատմում տա-
րագրության յերկար, անհրապույր տարինե-
րի մասին: Մենք յերբեք «Աշխատանքի Ազա-
տագրության» Խմբակի նման տարագրություն
չունեյինք. —մենք բոլոր ժամանակ ամենասերտ
կավերն ունեյինք Ռուսաստանի հետ, այսի-
դից շարունակ մարդիկ եյին զալս մեղ մոտ:
Տարագրության մեջ, իրադեկության կողմից,
մենք շատ ավելի լավ պայմաններում եյինք ապ-

րում, քան Ռուսաստանի նահանգական քաղա-
քում. ապրում եյինք բացառապես ռուսական
աշխատանքի շահագրգությամբ, գործն Ռուսաս-
տանում առաջ եր գնում, բանվորական շարժումը
աճում եր: «Աշխատանքի Ազատագրության» Խմբ-
ակը ապրում եր Ռուսաստանից կտրված, ապ-
րակը ապրում եր Ռուսաստանից կտրված, ապ-
րում եր արտասահմանում ուսակցիայի տարինե-
րը—Ռուսաստանից յեկող ուսանողը մի ամբողջ
դեպք եր, բայց պատահել վախենում եյին:

Յերբ 90-ական թվականների սկզբին նրանց մոտ
յեկան կասսոնը և կորոբկոն, վերադարձին նրանց
իսկույն և եթ կանչեցին ժանդարմական վարչու-
թյուն, հարցըրին, թե ինչո՞ւ են գնացել Պլեխանո-
վի մոտ: Հետախուզությունը կազմակերպված
եր որինակելի: Վերա Իվանովսան «Աշխատանքի
Ազատագրության» Խմբակի բոլոր անդամներից
ափելի մենակ եր զգում իրեն: Պլեխանովը և
Աքսելրոդը գոնե ընտանիք ունեյին: Վերա Իվա-
նովսան շատ անգամ եր խոսում իր մենակու-
թյան մասին. «Յես մոտիկ մարդ չունեմ», և
իսկույն աշխատում եր վիշտը ծածկել կատա-
կով. «Դուք ահա ինձ սիրում եք, յես այդ գի-
տեմ, իսկ յերբ մեռնեմ, միթե մի բաժակ թեյ
պակաս կիմեք»:

Ընտանիք ունենալու պահանջը ահագին եր նրա
մեջ, դուցե այն պատճառով, զոր նա մնացել եր

ոտար ընտանիքում, յեղել եր վորակես աղաստիս
բակչուհի»։ Պետք եր տեսնել, թե վորակիսի սի-
րով եր խաղում Դիմկի (Պ. Գ. Սմիգովիչի քրոջ
փոքրիկ տղայի հետ։ Վերա իվանովսան մինչ-
անգամ տնարարություն եր ցույց տալիս։ հո-
գածությամբ ուտեստի մթերքներ եր գնում այն
որերը, յերբ կոմունայում իր հերթն եր լինու-
մաշ յեփելու (Լոնդոնում Վերա իվանովսան,
Մարտովը և Ալեքսեյեվը ապրում եյին կոմու-
նայով)։ Ասենք, հազիվ թե մեկը համարնում եր
Վերա իվանովսայի ընտանեկան տնարարա-
կան հակուֆները։ Ապրում երնանինիլիստավարի՝
հագնվում անփույթ, ծխում եր անվերջ, նրա
սենյակում տիրում եր չտեսնված անկարգու-
թյուն, վոչ վոքի թույլ չեր տալիս իր սենյակի
մաքրել։ Կերակրվում եր բավական ֆանտա-
տիկ ձևով։ Հիշում եմ ինչպես մի անգամ մի
եր տապակում նավթայեռի վրա, մկրատով կտ-
րում եր պատառները և ուտում։

«Յերբ յես ապրում եյի Անգլիայում, — պատ-
մում եր նա, — անգլիացի կանայք մտածեցին
զբույցով զբաղեցնել ինձ։ «Դուք վորքան ժամա-
նակում եք միսը տապակում»։ «Ինչպես պատա-
հում ե, պատասխանում եմ։ յեթե ուտելու ցան-
կություն ունեմ» տաս բոպեյում տապակում եմ,
իսկ յեթե ցանկություն չունեմ — յերեք ժամում»։

Ու նրանք թողին ինձ զբաղեցնելու մտադրու-
թյունը։

Վերա իվանովսան գրելու ժամանակ վակ-
վում եր իր սենյակում և կերակրվում եր մի-
այն թունդ սև սուրճով։

Վերա իվանովսան սաստիկ կարուտում եր
Ռուսաստանին։ Կարծեմ 99. թվին նա անլեզալ
կերպով յեկավ Ռուսաստան, վոչ թե աշխատան-
քի, այլ այնպես, «գոնե գյուղացուն նայի, թե
նրա քիթը ի՞նչ ե դառել»։ Յեվ ահա, յերբ «Ա-
քրա»-ն սկսեց լույս տեսնել, նա զգաց, վոր դա-
ռուսական աշխատանքի մի մասն ե, նա սրտո-
ղով կպավ դրան։ Նրա համար «Աքրա»-ից հե-
ռանալը — նշանակում եր կրկին կտրվել Ռուսաս-
տանից, կրկին ընկղմվել գեպի հատակը տանող
անկենդան տարագրության մեջ։

Ահա թե ի՞նչու, յերբ յերկրորդ համագումա-
րին հարց բարձրացավ «Աքրա»-ի խմբագրու-
թյան մասին, նա զայրացավ։ Դա նրա համար
ինքնասիրության հարց չեր, այլ կյանքի և մահու-
լանդիր։

Հինգ թվին նա յեկավ Ռուսաստան և այս-
տեղ մնաց։

Յերկրորդ համագումարում Վերա իվանով-
սան իր կյանքում առաջին անգամ դեմ գնաց
Պլեխանովին, Պլեխանովի հետ նրան միացնում

եր յերկար տաղիների միաբան պայքարը, նա
գիտեր,թե Պլեխանովը ինչ հսկայական գեր ե
խաղացել բանվորական շարժումը կանոնավոր
հունի մեջ գնելու գործում, գնահատում եր
նրան, վորպես ոռւսական սոցիալ-դեմոկրատիա-
յի հիմնադրի, գնահատում եր նրա խելքը, փայ-
լուն տաղանդը: Ամենաանշան անհամաձայնու-
թյունը Պլեխանովի հետ սաստիկ հուզում եր
նրան, բայց այս գեպքում նա Պլեխանովի հետ
չգնաց:

Պլեխանովի վիճակը վողբերգական յեղավ:
Թեորիայի տաղարիզում նրա ծառայություննե-
րը բանվորական շարժման հանդեպ անշափ խո-
շոր են: Բայց տարագրության տարիները
իզուր չանցան նրա համար—զրանք կտրեցին
նրան ոռւս իրականությունից: Բանվորական
լայն, մասսայական շարժումը ծագեց այն ժա-
մանակ, յերբ նա արտասահման եր: Նա տեսել
եր տարբեր կուսակցությունների ներկայացու-
ցիչներ, գլողներ, ուսանողներ, անգամ առանձին
բանվորներ, բայց ոռւսական բանվորական մասսան
նա չեր տեսել, նրա հետ չեր աշխատել, նրան չեր
զգացել: Պատահում եր Ռուսաստանից գալիս եր մի
վորե ե թղթակցություն վորը պարզում եր շարժ-
ման նոր ձևերը, ստիպում եր զգալ շարժման հե-
ռանկարները, վաղիմիր իլյիչը, Մարտովը և

մինչև անգամ՝ վերա իվանովիան կարգում և
կրկին կարգում են այն, հետո վլ. իլյիչը յեր-
կար քայլում ե սենյակում, յերեկոյան ել քնել
չի կարողանում: Յերբ մենք փոխադրվեցինք
ժնե, յես փորձեցի ցույց տալ Պլեխանովին
թղթակցություններն ու նամակները և ինձ զար-
մացրեց նրա վերաբերմունքը,—կարծես կորցրեց
վոաքերի տակի հողը, դեմքին ինչ-վոր անվատա-
հություն յերեաց և այսուհետեւ այդ նամակնե-
րի և թղթակցությունների մասին նա յերբեք
չխոսեց:

Առանձնապես կասկածով սկսեց վերաբերվել
Ռուսաստանից յեկած նամակներին և նամակու-
մարից հետո:

Սկզբում դա ինձ մինչև իսկ վիրավորում եր,
հետո սկսեցի մտածել, թե դա ի՞նչիցն է:

Նա վաղուց եր դուրս յեկել Ռուսաստանից, և
չուներ փորձով մշակված այն չափանիշը, վոր
հնարավորություն ե տալիս յուրաքանչյուր թըդ-
թակցության տեսակարար կշիռը վորոշելու և
տողամեջ շատ բան կարդալու:

Հաճախ բանվորներ եյին գալիս «Ասկրա»-ի
խմբագրատունը, յուրաքանչյուրը, ի հարկե, ցան-
կանում եր տեսնել Պլեխանովին: Շատ ավելի դժվար
եր լինել Պլեխանովի մոտ, քան մեր կամ Մարտովի
մոտ, իսկ յեթե մինչև իսկ բանվորը լինում եր

Պլեխանովի մոտ, նրա մոտից հեռանում եր խառն զգացմունքներով։ Նրան զարմացնում եր Պլեխանովի փայլում միտքը, գիտությունը, սրամտությունը, բայց թվում եր թե Պլեխանովից հեռանալով բանվորը ահազին տարածություն ե զգում իր և այդ փայլուն թեորետիկի միջե, բայց իր նվիրականի մասին, այն մասին, ինչ մասին բանվորը կուղեր պատմել, խորհրդակցել—այնպես ել չեր կարողանում։

Յեվ յեթե բանվորը Պլեխանովի հետ չեր համաձայնում ու փորձում եր իր կարծիքը հայտնել, —Պլեխանովն սկսում եր զրգովել. «Ձեր հայրիկն ու մայրիկը դեռ չորեքթաթ եյին տալիս, յերբ յես...»։

Հավանորեն, տարազրության առաջին տարիներն այդպես չի յեղել, բայց 900 թվականների սկզբին Պլեխանովը չուներ արդեն Ռուսաստանի անմիջական զգացումը։ 1905 թ. նա Ռուսաստան չեկավ։

Պավել Բարիսովիչ Աքսելրոդը կազմակերպող եր շատ ավելի մեծ չափով, քան Պլեխանովը և Զասովիչը։ Նա ավելի շատ եր շփում յեկողների հետ, դրանք նրա մոտ ավելի շատ ժամանակ եյին մնում, այդտեղ նրանց կերակրում եյին, և Պավել Բորիսովիչը ամեն բանի մասին մահրամասն հարց ու փորձում եր նրանց։

Նա նա թակազրություն ուներ Ռուսաստանի հետ, զիտեր հարաբերության ծածտուկ միջոցներ։ Դե, ինչպես կարող ե զգալ իրեն յերկար տարիներ տարազրության մեջ Շվեցարիայում տպող, ուսւ կազմակերպող-հեղափոխականը, կորելի յե յերևակայել։ Պավել Բարիսովիչը յերեք քառորդով կորցըրել եր աշխատունակությունը, անքուն գիշերներ եր անցնում, գրում եր չափաղանց լարվածությամբ, ամիսներով, անկարող լինելով ավարտել սկսած հողվածը։ Նրա ձեռագիրը համարյանկարելի յեր ջոկել, այնքան նյարդային եր գրում։

Աքսելրոդի ձեռագիրը վ. Իլյիչի վրա միշտ ուժեղ տպագորություն եր թողնում։ «Անա կամնես այսպիսի վիճակի, ինչպես Աքսելրոդը, —ասում եր վ. Իլյիչը շատ անգամ, —դա ուղակի սարսափելի յե»։ Աքսելրոդի ձեռագրի մասին նա մի քանի անգամ խոսեց բժիշկ Կրամերի հետ, վոր բժշկում եր նրան վերջին հիվանդության ժամանակ։ Յերբ վ. Իլյիչը առաջին անգամ գնաց արտասահման՝ կազմակերպչական հարցերի մասին նա ավելի շատ խոսում եր Աքսելրոդի հետ։ Աքսելրոդի մասին նա ինձ շատ բան պատմեց, յերբ յես յեկա Մյունիսեն։ Այն մասին, թե ի՞նչ ե անում Աքսելրոդը այժմ, նա նույնը հարցը ինձ, Աքսելրոդի անունը լրագրում մատնանշելով, այն ժամանակ, յերբ ինքը

արդեն վոչ միայն չեր կարող գըել, այլ և վոչ
մի խոսք ասել:

Պ. Բ. Աքսելը պը առանձնապես հիվանդա-
գին եր վերաբերում այն բանին, վոր «Իսկրա»-ի
Շվեյցարիայում չի հատարակվում և վոր Ռու-
սաստանի հարաբերությունները չեն կատար-
վում իր միջոցով։ Դրա համար ել նա այնպես
կատաղի վերաբերվեց յեռյակի հարցին՝ Ո հա-
մագումարում։ «Իսկրա»-ն լինելու յե կազմա-
կերպչական կենտրոն, իսկ նա հեռացվում է
խմբագրությունից։ Յեկ այդ այն ժամանակ
յերը Ո համագումարում ավելի, քան յերեկ,
զգացվում եր Ռուսաստանի շունչը։

Յերբ յես Մյունխեն յեկա, «Աշխատանքի
Ազատագրություն» Խմբակից այնտեղ ապրում
եր միայն Զասուլիչը ուրիշի անունով, բոլգա-
րական անձագրով և կոչվում վելիկայա Դմիտ-
րինա։

Բոլգարական անձագրերով պիտի ապրելին և
մյուսները, Մինչեւ իմ գալը Վլ. Իլիչը ապրում եր
ուղղակի առանց անձագրի։ Յերբ յես յեկա՝ վերց-
րին ինչ-վոր բոլգարացու՝ դր. Իորդանովի անձագի-
րը, ավելացրին Մարիցա կնոջը և, այդպես, աեղա-
վորվեցինք բանվորական ընտանիքում հայտարա-
րությամբ վարձված սենյակում։ Ինձանից առաջ
«Իսկրա»-ի քարտուղարը յեղել եր ինտա Հերմոգե-

նովսա Սմիդովիչ-Լեման, վոր նույնպես ապրում
եր բոլգարական անձագրով և կոչվում եր Դմիտրի։
Յերբ յես յեկա, Վլ. Իլիչը պատմեց, թե ինքը
անց ե կացրել այն վորոշումը, թե «Իսկրա»-ի
քարտուղարը պիտի լինեմ յես, յերբ վոր կգամ, Դա,
ինարկե, նշանակում եր, վոր հարաբերություն-
ները Ռուսաստանի հետ պիտի կատարվեն Վլ.
Իլիչի ամենամոտ հսկողությամբ։ Մարտովն ու
Պոտրեսովն այդ ժամանակ դեմ չեյին, իսկ «Աշխ.
Ազատագրություն» Խմբակը իր թեկնածուն չու-
ներ, ասենք, այդ ժամանակ «Իսկրա»-ին առանձին
նշանակություն ել չեր տալիս։ Վլ. Իլիչը պատ-
մում եր, վոր իրեն շատ անհարմար եր այդ
բանը անել, բայց ինքը գտնում եր, վոր գործի
համար անհրաժեշտ ե, իսկույն և եթ ահազին գործ
սկսվեց։ Աշխատանքը կազմակերպված եր այս-
պես—Ռուսաստանից նամակները ուղարկում
եյին Գերմանիայի զանազան քաղաքներ՝ Գեր-
մանացի ընկերների հասցեով, իսկ նրանք ու-
ղարկում եյին դր. Լեմանի հասցեով, վորը բո-
լորն արդեն ուղարկում եր մեզ։

Դրանից քիչ առաջ մի ամբողջ պատմու-
թյուն ստեղծվեց։ Ռուսաստանում գրքույկների
տպագրության համար հաջողվեց, վիրջապես, Քի-
շինյովում մի տպարան ունենալ, վորի վարիչ Ակիմը
(Լիբերի յեղբայրը—Լեոն Գորդման) Լեմանի

հասցեով ուղարկել եր մի բարձ՝ Թուսաստանում
լույս տեսած գրքույկների որինակները մեջը կա-
րած։ Փոստատանը, զարմացած լեմանը տարա-
կուսանքի մեջ հրաժարվեց բարձից, բայց յերբ
մերոնք իմացան այդ և աղմուկ հանեցին, նա բար-
ձը ստացավ և ասաց, վոր այսուհետեւ իր անու-
նով յեկած ամեն բան ընդունելու յե, թեկուզ
ամբողջ մի գնացք։

«Աւելի մուսաստան փոխադրելու համար արանսպորտ չկար տակավիճուն»: «Աւելի մոխադրվում եր գլխավորապես կրկնահաստակ ճամպրուկներով տարբեր ուղերձների հետ, վորոնք այդ ճամպրուկները տանում եյին մուսաստան՝ պայմանավորված տեղը, ներկայացողին հանձնելու:

Այդպիսի կետեր կային Պոկովում՝ լեպեշին-
սկիների մոտ, կիսում և ելի մի ինչ վոր տեղ:
Ուու Ընկերները գըականությունը ճամպրուկից
հանելով, հանձնում եյին կազմակերպության:
Տրանսպորտը հենց նոր եր սկսել կարգավորվել
լատիշներ Ռուբառուի և Սկուբիկի միջոցով:

Այս բոլորի վրա շատ ժամանակ վատնվեց։
Ժամանակ կորչում երև և ամեն տեսակ բա-
նակցությունների վրա, վորոնցից հետո վոչինչ
դուրս յեկավ։

Հիշում եմ, մի ամբողջ շաբաթ, կարծեմ, բա-

Նակցություններ յեղան մի ինչ վոր տիպի հետ,
վորը կամենում եր կապ հաստատել կոնտրա-
բանդիստների հետ, ճանապարհորդելով սահմանն
ի վեր՝ լուսանկարչական գործիքով, վորը պետք ե
նրա համար մենք գնելինք:

Նամակագրություն կար «Աչքա»-ի բերլինի, Պարիզի, Շվեյցարիայի, Բելգիայի գործականի, Նրանք ողնում ելին ինչով կակաների հետ։ Նրանք ողնում ելին մարդիկ, վոր համաձայրող ելին, գտնում ելին մարդիկ, վոր համաձայրող ելին առաջընկեր տանել։ Վորոնում, գանում ելին ժողով, կապեր, հասցեներ և այլն։

1901թ. հոկտեմբերին շաբաթվական ներից կազմվեց այսպես անվանված «Ռուսական հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի Արտասահմանյան Միություն»:

սահմանյան ու ու կապերը Ծուսաստանի հետ որսորեց բազմանում ելին: «Աւքրա»-ի ամենաակտիվ թղթակիցներից մեկը Պետերբուրգի բանվոր Բարուշ կլինն եր, վորի հետ Վ. Ի. Միջը Ծուսաստանից դուրս գալուց առաջ պայմանավորվել եր թըդ-թակցելու մասին: Նա բազմաթիվ թղթակցություններ ուղարկեց Որեխովո-Զուեվից, Վաղիմիրից, Գուսյա-Խրոստալյուից, Իվանովո-Վոզնեսենիամիկայից, Կոլյամայից, Քինշշմից:

Նա շարունակ գնում եր այդ ասլու, և առաջ ամբաղջում գլուխ ելին զետերբուրպից, Մաս-

կվայից, Աւրալից, Յուգից: Նամակադրություն
ունեյինք Հյուսիսային Միության հետ: Շու-
տով իվանովո - Վողնեսենսկից յեկավ Միու-
թյան ներկայացուցիչ նոսկովը: Ավելի ոռւ-
սական տիպ, քան դա եր, դժվար ե յե-
րեակայել: Եեկ, կապույտ աշբերով զեմք, փոքր
ինչ կորացած՝ նա խոսում եր «ո»-ով: Կապոցը
ձեռքին յեկել եր արտասահման ամեն բանի մա-
սին խոսելու, պայմանափորվելու: Նրա քեռին,
իվանովո-Վողնեսենսկում մի մանր գործանատեր
եր վոր ճանապարհածախս եր տվել նրան արտա-
սահման գնալու, վորպեսզի ազատվի անհանգիստ
ազգականից, վորին մերթ կատալաժկա եյին տա-
նում, մերթ խուզարկում եյին: Բորիս Նիկոլայևի-
չը (նա իսկապես Վլադիմիր Ալեքսանդրովիչ եր,
իսկ դա նրա մականունն եր) լավ զործնական
մարդ եր: Յես նրան հանդիպել եյի դեռ
Ուֆայում, ուր նա իջել եր Յեկատերին-
բուրգ գնալու ժամանակ: Նա արտասահման յե-
կել եր «կապերի» համար, կապեր հավաքելը
նրա արհեստն եր: Հիշում եմ, ինչպես նա մեր՝
Մյունիսենի նեղ խոճանոցում նստած՝ փայլուն
աշքերով պատմում եր մեզ Հյուսիսային Միու-
թյան աշխատանքի մասին: Պատմելով՝ սաբա-
փելի վոդեռը վում եր: Վայ իւիչը իր հարցերով
միայն յուղ եր ածում կրակին: Բորիսը —քանի

ապլում եր արտասահմանում - պահում եր մի
տետր, ուր խնամքով գրում եր բոլոր կապերի
մասին։ Ո՞վ վո՞րտեղ ե ապլում, ինչ և անում,
ինչով կարող ե ոգտակար լինել։ Հետո այդ կա-
պերը թողեց մեզ։ Դա յուրատեսակ բանաստեղծ
կազմակերպիչ եր։ Ասենք, նա շատ եր իդյալա-
կանացնում մարդկանց և աշխատանքը և չեր
կարողանում անվախ նայել իրականության աշ-
քերին։ Ո համագումարից հետո նա հաշտեցնող
եր, հետո, ինչպես յեղափ, հետացափ քաղաքա-
կան ասպարեզից։ Ռեակցիայի տարիները ինք-
նասովանություն դրձեց։

Մյունիստն գալիս ելին և ուրիշները։ Մինչև
իմ գալը Մյունիստն եր յեղել Ստրուվեն։ Այդ ժա-
մանակ արդեն կապերը խզում ելին նրա հետ։
Այդ ժամանակ նա սոցիալ-դեմոկրատների բա-
նակից անցնում եր լիբերալների բանակը։
Վերջին գալուն խիստ ընդհարվել ելին նրա
հետ։ Վերա իվանովսան կպցրեց նրան «պայտած
հորթ» անունը։ Վաղիմիր իլիչը և Պլեխանովը
խաչ ելին քաշել նրա վրա։ Վերա իվանովսան
կարծում եր, վոր նա դեռ անհուսալի չէ։ Նրան
և Պոտրեսովին կատակով կոչում ելին «Struve
freundliche Partei»*):

Սարուվեն յերկրորդ ասկան յաւարագիւղական:

^{*)} Սարսուկիյի բարեկամական վուճակներ

արդեն Մյուսիսեն եյի: Վէ. Իլյիչը չուզեց նրան
տեսնել: Յես գնացի Ստրուվեյին տեսնելու Վե-
րա իվանովսայի բնակարանում: Տեսակցությունը
շատ ծանր եր: Ստրուվեն սարսափելի նեղացած
եր: Դաստայեսկյան ծանր մթնոլորտ եր կարծես:
Նա խոսում եր այն մասին, թե իրեն համա-
րում են ռենեգատ և ինչ-վոր ելի այդ վո-
գով, հեղնում եր ինքն իրեն: Այժմ արդեն յես
չեմ հիշում այն, ինչ ասում եր նա, հիշում եմ
միայն այն ծանր զգացումը վորով հեռացա-
յես այդ տեսակցությունից: Պարզ եր, վոր նա
ոտար, թշնամի կուսակցության մարդ եր: Վէ.
Իլյիչը իրավացի եր: Հետո մեկի հետ, չգիտեմ
արդեն ում, Ստրուվեյի կինը՝ Նինա Ալեքսան-
դրովսան ուղարկել եր բարե և մի տուփ մար-
մելագ: Նա անդոր եր, և հազիվ թե հասկանում
եր ուր եթեքվում Պյոտր Բելնդարդովիչը: Բայց
նա ինքը հասկանում եր:

Իմ գալուց հետո մենք տեղափոխվեցինք գեր-
մանական բանվորի ընտանիքում։ Մեծ ընտա-
նիք եր—վեց հոգի։ Բոլորն ապրում եյին խոհա-
նոցում և մի փոքրիկ սենյակում։ Բայց զարմա-
նալի մաքրություն կար. յերեխաները ման եյին
գալիս մաքուր, քաղաքավարի։ Յես վճռեցի, վոր
վլ. իլիչին պետք ե տանը կերակրել և յեփել-
թափել սկսեցի։ Կերակուրներն յեփում ելի տա-

նտիրոջ խոհանոցում, բայց ամեն ինչ պետք եր
պատրաստել սենյակում։ Աշխատում եյի վորքան
կարելի ե քիչ աղմուկ հանել, վորովիտետ վկլ. իլ-
յիչը այդ ժամանակ արդեն սկսել եր գրել «Կո
ծելաթ»-ը։ Յերբ նա գրում եր, սովորաբար ա-
րագ քայլում եր անկյունից անկյուն և շշնջում
եր այն, ինչ պատրաստվում եր գրել։ Յես արդեն
այդ ժամանակ հարմարվել եյի նրա գրելու այդ յե-
ղանակին։ Յերբ նա գրում եր, յես արդեն վոչ մի
բանի մասին նրա հետ չեյի խոսում, վոչինչ չե-
յի հարցնում։ Հետո զբոսանքի ժամանակ ինքը
պատմում եր, թե ինչ ե գրում, ինչի մասին ե
մտածում։ Դա նրա համար նույնպիսի պահանջ
եր դարձել, ինչպես շշնջալը նախքան հոդված
գրելը։ Յեռանգով պոտում եյինք մենք Մյուսխե-
նի շրջակայքը, ընտրելով ավելի վայրի տեղեր,
ուր ժողովուրդը քիչ ե։

Ամսից հետո, վոլխաղբյուրինք սովորական բառ՝ Մյուսնիսենի «Նվաբինդ» արվարձանը, կարան՝ Կառուցվածք բազմաթիվ տներից մեկը: Հենց նոր կառուցվածք աշխարհականը» (հեռանալու «Կահճավորանք»)

Ձեռք բերինք «կարագում» կ ժամանակ այդ բոլորը ծախեցինք 12 մարկով) և ասոքեզինք յուրովին:

տովն անդադար խոսում եր, մի նյութից մյուս
սին թռչելով: Նա շատ կարգում եր, չգիտես վորտե-
ղից միշտ իմանում եր անթիվ նորություններ, ճա-
նաչում եր բոլորին և ամեն բան: «Մարտովը—տի-
պիկ ժուրնալիստ ե, —ասում եր նրա մասին հաճախ
վկազմիր իլյիչը, —նա անչափ տաղանդավոր ե,
ամեն ինչ կլանում ե, սաստիկ տպավորվող ե, բայց
ամեն բանի թեթև ե վերաբերվում»: «Ասկրա»-ի
համար Մարտովը ուղղակի անփոխարինելի եր:
Վ. իլյիչը սաստիկ հոգնում եր այդ ամենորյա,
5—6 ժամ տևող խոսակցությունից, դրանից բո-
լորովին հիվանդանում եր, դառնում եր աշխա-
տանքի անընդունակ: Մի անգամ նա խնդրեց
ինձ գնալ Մարտովի մոտ և խնդրել նրան, վոր
մեզ մոտ չգա: Պայմանավորվեցինք, վոր յես
կերթամ Մարտովի մոտ, կպատմեմ նրան ստաց-
ված նամակների մասին և աշխատանքը կվերջաց-
նեմ նրա հետ: Դրանից սակայն, հետեւանք ըստ
տացվեց, յերկու որ հետո ամեն ինչ ելի առաջվա-
պես ընթացավ: Մարտովը առանց խոսակցություն-
ների չեր կարողանում ապրել: Մեզանից հետո նա
վերա իվանովսյի, Դիմկայի, Բլյումենֆելդի¹⁾
հետ գնում եր կաֆե, ուր նստում եյին ժամերով:

1) Բլյումենֆելդը շարում եր «Ասկրա»-ն, առաջ Լայպցիգում,
բում Նա յերեւելի զբաշար եր և լավ ընկեր: Գործին վերաբերվում

Մարտովն ակտեց ամբողջ որերն անցկացնել
նրանց մոտ:

Հոկտեմբերին մենք բոլորս Մյունխենից գնա-
ցինք Յուրիիմ՝ «Պաбоչե Ճելօ»-ին «միանալու»:
Վոչ մի միացում չստացվեց: Ակիմովը, Կրիչևսկին
և ուրիշները անչափ շատախոսեցին, բայց առանց
վորիվ հետևանքի համելու: Մարտովը սարսափե-
լի տաքացավ, «Պաбоչե Ճելօ»-ի կողմանկիցների
դեմ դուրս գալով, մինչև անգամ իր փողկապը պո-
կեց. յես նրան սուածին անգամն եյի տեմնում այդ-
պես: Պետքանովը փայլում եր սրամտությամբ: Բա-
նաձև կազմեցին՝ միացման անհարին լինելու
մասին: Այդ բանաձևը կոնֆերանսում չոր ձայ-
նով կարդաց Դանը: «Պապի նվիրակ» ասում եյին
հակառակորդները:

Այս պառակտումը բոլորովին անմնաս անցավ:
Մարտովը, Լենինը չեյին աշխատում «Պաбоչե
Ճելօ»-ի հետ. իսկապես պառակտում չկար, վո-
րովինետի չկար և միասին աշխատանք: Իսկ Պե-
տյանովը յերեւելի արտմագլության մեջ եր, վո-
րովինետի հակառակորդը, վորի հետ նա ստիպ-
րովինետի կովկաս ընկած եր կոնակի վրա,
ված եր յերկար կովկաս ընկած եր կոնակի վրա,
Պետքանովը ուրախ եր և խոսում եր շարունակ:

Եր չերմորեն նա շատ եր սիրում վերա իվանովսյին, միշտ հոգ
եր տանում նրա մասին: Պետքանովի հետ չեր հաշտվում: Դա մի
ընկեր եր, վորին կարելի եր միտնգամայն հավատալ ինչ անձն
առներ—կաներ:

Ապրում եյինք միևնույն հյուրանոցում, կերակրվում եյինք միասին, և ժամանակն առանձնապես լավ անցավ:

Միայն յերբեմն փոքրիկ տարբերություն եր նկատվում վորոշ խնդիրների մոտեցման մեջ:

Հիշեցի մի խոսակցություն։ Այն կաֆեում,
ուր նստած եյինք, մեր սենյակի կողքին գտնը-
վում եր մարմամարզության դահլիճ, հենց այդ
ժամանակ այնտեղ զինսպարժություն եր կա-
տարվում։ Բանվորները, վահաններով զինված
կովում եյին, կարտոնե թրերը խաչաձևելով։
Պէտքանովը ծիծաղեց. «մենք ել ահա ապագա
հանրակարգում այսպես պիտի կովենք»։ Յերբ
վերադառնք, յես գնացի Աքսելը ողի մոտ—նա
շարունակեց զարգացնել Պէտքանովի շոշափած
նյութը. «Ապագա հանրակարգում մահացու ձան-
ձրույթ ել լինելու և վոչ մի պայքար»։

Այս ժամանակ յես վայրենու չափ ամաչ-
կոտ եյի և վոչինչ չասի, բայց հիշում եմ, վոր
վիրավորանիք զդացի ապագա հանունեանունը:

Ամբողջ գրքույկը մի կրքոտ կոչ եր կազմակերպության, նա տալիս եր լայն կազմակերպության ծրագիր, կազմակերպության, ուր ամեն մեկը կարողանար գտնել իր տեղը, կարողանար դառնալ հեղափոխական մեքենայի պառաւակը, առանց վորի աշխատանքը չի կարող առաջ գնալ վորքան ել վորք լինի: Գրքույկը կոչ եր անում համառ, անդադրում աշխատանք թափել ստեղծելու այն հիմքը, վոր անհրաժեշտ եր ստեղծել նրա համար, վորպեսզի այն ժամանակվա ուստական պայմանների մեջ կուսակցությունը կասականար գոյություն ունենալ վոչ թե խոսքով, այլ իրապես: «Սոցիալ դեմոկրատ չպետք ե վախենա յերկար աշխատանքից, պետք ե աշխատել աշխատել առանց ձեռները ծալելու, միշտ պատրաստ լինել ամեն ինչի, սկսած հեղափոխության առավել «ճնշման» մոմենտին կուսակցության պատիվը, վարկը և ժառանգությունը փրկելուց և վերջացրած մինչև համաժողովրդական զինված ապարարաբություն պարապատելը, նշանակելը, ապատամբություն պարապատելը, — գրում եր վ. Իլյիչը «Կոիրագործելը», — ում:

Քսան յերկու տարի յէ ասցոլ այս որդյ,
յերբ գրվել և այդ գրքույկը, և վորպիսի՛ քսան
յերկու տարի, — հիմքից փոխվել են կուսակցու-
թյան աշխատանքի բոլոր պայմանները, բոլորու-

վին նոր խնդիրներ են կանգնած բանվորական շարժման առաջ, բայց այժմ ել հափշտակում ե այդ գրքույկի հեղափոխական պաթուը, և այժմ այդ գրքույկը պետք ե ուսումնակրի նա, ով ուզում ե լենինյան լինել վոչ թե խոսքով, այլ իրապես:

Յեթե «Ճրոյա նարօձ» ն խոշոր նշանակություն ունեցավ վորոշելու այն ուղին, վորով պետք ե ընթանար հեղափոխական շարժումը, ապա «ԿТО ծելատեղ տալիս եր լայն հեղափոխական աշխատանքի ծրագիր, մատնանշում եր վորոշ գործ»:

